



Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻ. Տարի - ՅՈՒՆԻՍ 1936



12^{me} Année - Juin 1936



Խմբագրական

Իմ եկեղեցիս

Յ. Ն. Դ.

Հոգ. կեանք

Յուդա Իսկարիովտացի

Տրտունջ չընենք

Զ. Բ. Պուտաբեան

Սամուէլ Պ.

Շնորհաց ծովէն

Օգտակար կեանք մ'ը

Թանկագին կտակ մ'ը

Սիսակ Գալայճեան

Ռաֆէլ Պողոսեան

Կենաց ածուներէն

Յուդայի կեանքէն

Զ. Բ. Պ.

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը ընտանիքին մէջ

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Պատանեաց

Աստուծոյ աչքը

Յ. Բ.

Աստուծոյ վստահէ

Ս. Պ.



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնօրինակ ճշմարիտ «Բանօրին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ու եւ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն ռուս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը, այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագրին է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:
ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ
— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք ԵՒ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արձնացի՛ր դու
որ կը քնանաս, ե.
կանգնէ մեռելնե-
րէն, ու Բրիտոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ յըլլայ թէ
Անոր ցանգիսօր մտնելու խոստմանքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1936

ԹԻԻ 6



ԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ

(Հոգեգալստեան խորհրդածուծութիւններ)

Այս վէճին վրայ պիտի շինեմ Իմ եկեղեցիս Մատթ ԺԶ. 18

Փրիլպպէի Կեսարիոյ մէջ մեր Տէրը Իր աշա-
կերտներուն վկայութիւնը կը հարցնէ Իր մասին:
Պետրոս, որպէս ներկայացուցիչը աշակերտաց և
բոլոր հաւատացելոց, կը զաւանի զԱյն Քրիստոս-
սը՝ կենդանի Աստուծոյ Որդին:

Տէրը կ'ընդունի այդ զաւանութիւնը որպէս
ճշմարտութիւն, քանզի ճշմարիտ էր եւ անոր կը
յաւելու, «Երանի՛ քեզ Սիմոն, Յովնանի որդի,
վասնզի մարմինը եւ արիւնը քեզի չյայտնեց ա-
սիկա, հապա Իմ Հայրս որ երկինքն է: Եւ քեզի
կ'ըսեմ որ դուն Պետրոս ես, ու այս վէճին վրայ
պիտի շինեմ Իմ եկեղեցիս, եւ զԺոխքին դռները
զանիկա պիտի չյաղթեն» Մատթ: ԺԶ. 17, 18:

ԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ.

Շէ՛նքը: Մարդկային ճարտարարուեստական
տաղանդի ներկայ կերտուածքները. ո՛չ. տա-
ճարը պակաս կերտուածք մը չէր եւ եթէ Տէրո-
ջը մոռնի մէջ աշպիտի նիւթական գաղափար
մը գոյութիւն ունենար, տաճարէն «սելի գեղե-
ցիկը չպիտի ուզէր, մինչդեռ կ'ըսէ քիչ վերջը, պի-
տի չմնայ հոս քար քարի վրայ որ պիտի չքակ-
ուի: Ուրեմն Անոր մտքին մէջ եղածը կենդանի
քարերուն միութիւնը կամ անոնցմով շինուած
տունն է, որուն մէջ իւրաքանչիւր հաւատացեալ
իր ուրոյն տեղը ունի: Բնագիրը որ մեր հայերէ-
նի մէջ եկեղեցի թարգմանուած է, իր իսկական
նշանակութեամբ տոնուած է, որ է խումբ, միա-
բանութիւն հաւատացելոց եւ ոչ թէ շէնք:

Ջարմանալի երեւոյթ մըն է այս ոչ միայն
աշխարհի, հապա նաեւ երկինքի բնակիչներուն,
որոնք ակնկառոյց կը դիտեն Քրիստոսի մարդե-
ղութենէն ասգին աեզի ունեցած զէպքերը, որոնց

մէջէն երեւան եկաւ անոնց բոլորովին անծանօթ
եղող մարմին մը: Խումբ մը հաւատացեալներ,
ամէն լեզուէ եւ ամէն երկրէ ու ամէն գոյնէ, ո-
րոնց մէջէն թշնամութիւնը վերցուած է և որոնք
կրկին ուրախութեամբ միացած իրարու հետ, Աս-
տուծոյ հաճութիւնը կը վայելեն որպէս ընտա-
նութիւն մը: Անոր նախագահութեան տակ: Ահա
այսպէս ինկած մարդկութեան սերունդը և անոնց
անօրէնութեան համար անոնց զէմ բարկացած
Աստուծոյ հաշտուած են իրարու հետ: Արդելքնե-
րը վերցուած են, մութը փարատած է, փրկելոց
խումբը գոյութիւն ունի եւ կ'ուրախանայ անոր
համար որ երկինքի Տէրը Իր բոլոր փառքը բե-
րած միացուցած է իրենին հետ իրեն դուրս ըլ-
լալով: Այո, Տէրը զարմանահրաշ բան մը ըրաւ:
Ինքը, Աստուածութեան բոլոր լեցունութիւնը Իր
մէջ բնակելու հաճութիւնը վայելող անձը, Ինքը,
կատարեալը որ կը լեցնէ ամէնը ամէն բանի
մէջ, Ինքզինք կարծես անկատար կը սեպէ եւ
Իր ծրագրին մէջ տեղ կուտայ եկեղեցիին, որպէս
Իր լրութիւնը (Եփես. Ա. 23): Այս ցոյց կուտայ
թէ Քրիստոսի լրումը առանց եկեղեցիին կարելի
չէ: Ուստի Քրիստոսը կարելի չէ ըմբռնել առանց
Իր եկեղեցիին, այնպէս՝ ինչպէս կարելի չէ եւ-
թաղրիլ փեսայ մը առանց հարսի եւ գլուխ մը
առանց մարմնոյ: Ուստի եկեղեցին Քրիստոսի
լրումն է իր մասնաշատուկ առումովը:

ԱՆՈՐ ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԳԵ-
ՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ.

Մեր Տէրը վարագոյր մը կը բանայ ցոյց տա-
լով եկեղեցիին գաղտնիքներէն մին: Յայտնելով
թէ այն եկեղեցին, որուն անկիւնաքարը բուն

իսկ Ինքն է (Եփես. Բ. 20), եւ որուն երկրորդը Պետրոս պիտի ըլլար որպէս առաքեալներուն երիցագոյնը, քալելով անոնց ու մարգարէներուն առջեւէն, յարմարութեամբ կառուցուած միակերպութեամբ փառահեղ, սուրբ, կենդանի տաճարը կազմելու Տէրոջմով, այն եկեղեցին իր նորութեամբը փուշ մըն էր մխուած Սատանային աչքին, որ իր իշխանութեամբ ու իրեն տրամադրուած բոլոր ուժերով դէմ պիտի կենար անոր կազմին յարձակելով ու հալածելով զայն, արդիւնելով անոր շինութիւնը ու խափանելով անոր աւարտումը: Պօղոս առաքեալ ուրիշ վարագոյր մը կը բանայ ցոյց տալու թէ այդ ահաբեկ ուժերը, որոնք արիւնէ ու մարմինէ չէին, հապա իշխանութիւններ ու պետութիւններ եւ այս խաւար աշխարհին իշխանները ու երկնաւորներուն մէջ եղող չար ոգիները (Եփես. 2. 12), մահուան ու գերեզմանի, դժոխքի թաղաւորութիւն (Յոր. Է. 9) իր կապանքներով:

Բայց այս բոլոր յարձակող ուժերն դէմ Աստուծոյ ուժովը սպառազինուած եկեղեցին (Եփես. 2. 13-17) ունի երկինքի բանալին (Եփես. 2. 18) որով անկա ի՞նչ որ երկրի վրայ կապէ, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ եւ ի՞նչ որ երկրի վրայ արձակէ, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ: Այսպէս դժոխքի դռները զանկա չպիտի կրնան յաղթահարել:

Երկրի բոլոր ծայրերէն սուրբերու խումբը յաղթական կը յառաջանայ դէպի երկնային հայրենիքը, Քանանը:

ԱՆՈՐ ԱՌԱՋԱՆՆԱԿԱՆՈՐԶԸ.

Տէր Յիսուս Իր աշակերտներէն բաժնուելու առթիւ Իր սկսած գործը անոնց յանձնեց ըսելով, «Դացէք բոլոր ազգերը աշակերտեցէք: Դուք Ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ եւ բոլոր Հրէաստանի ու Սամարիայի մէջ եւ մինչեւ երկրի ծայրերը» Մատթ. ԻԸ. 19, Գործ. Ա. 8:

Ի՞նչ գեղեցիկ գործ, Վկայել: Վկայել Աստուծոյ սիրոյն մասին թէ նա այնքան սիրեց աշխարհը մինչեւ իր Միածին Որդին տուաւ մեզի համար: Թէ Որդին մարդոյ եկաւ որպէսզի կորսուածը փնտռէ ու փրկէ: Թէ Անոր միջոցաւ ամէնը յաւիտենական յոյսի եւ յաւիտենական կեանքի կանչուած են: Թէ մեղաւորը իր մեղքերէն ազատուելու համար պէտք չունի ինքնախաբէական միջոցներու դիմելու հապա պարզապէս հաւատալու Անոր որ մեղաւորին տեղը մեռած և անոր մեղքը վերցուցած է: Վկայելու որ թէ և մեղաւորին մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւ-

նիպէս ճերմակ պիտի ըլլան: Թէ Յիսուս եկաւ որպէսզի մեղաւորները կեանք ունենան և աւելի ունենան: Թէ մենք մեղքէն ազատուելով արդարութեան համար պիտի ապրինք: Թէ Յիսուս Քրիստոս մահովը Աստուծոյ եւ մարդկութեան մէջ հաշտութիւնը կնքուած է: Թէ Անով մենք խաղաղութիւն ունինք եւ Քրիստոսով յաղթութիւն մեղքին ու Սատանային վրայ:

Եկեղեցին այս վկայութեանց կոթողն է:

ԱՆՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ.

Բայց այս վկայութիւնը մարդկային մաքէ եւ լամ վկայութիւն մը չէ: Անոր հետեւ գաղտնիք մը կայ: Այս գաղտնիքը մեզի պարզուած է Պենտեկոստէի օրը: Յիսուս աշակերտներուն ըսաւ համբաւունքով: «Դուք չեք սպասեն Հօրը խոստումներն... վասնզի Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած առիւթը զրոյթիւն պիտի տունէք եւ Ինծի համար վկաներ ըլլաք» (Գործ. Ա. 8):

Արդ, զարմանալի չէ որ Փրկիպալէի կեսարիոյ մէջ իր փառասրբ վկայութիւնը տուող Պետրոսը, տարի մը յետոյ, քահանայապետին գաւիթին մէջ հասարակ մարդոց, նոյնիսկ կնոջ մը առջեւ ուրացաւ իր Տէրը, քանզի չունէր Ս. Հոգւոյն զօրութիւնը իր մէջ եւ երբ նա կ'ընդունէր խոստումը Պենտեկոստէի օրը, ոչ թէ քահանայապետին ծառաներէն կամ աղախիններէն չէր վախնար, հասաւ կը վկայէր բոլոր Իսրայէլի ժողովուրդին ամենէն հաստատուն ու վճռական ոճով մը, «Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս թող զիտնայ որ Աստուած զԱնիկա Տէր ալ ըրաւ, Օծեալ ալ, այն Յիսուսը որ դուք խաչեցիք»: Այս խօսքը լախտի հարուածներու նման կ'իջնէր քահանաներուն գլխուն, բայց խօսողը ոչ թէ Պետրոս էր, այլ Ս. Հոգին որ Իր զօրութեամբ կը հանգչէր անոր վրայ:

Ու Պենտեկոստէի օրէն ի վեր Ս. Հոգին աշխարհ եկած, եկեղեցիին ղեկը Իր ձեռքն առած, անոր մէջ եւ անոր միջոցաւ կը վկայէ բոլոր ազգաց թէ, «Անկէ զատ ուրիշ անուն չկայ երկինքի տակ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք փրկուիլ»: Ով որ Տէրոջը անունը կանչէ, պիտի փրկուի:

ՈՒ ՀԻՄՆ.

Մենք այդ եկեղեցիին անդամները, ունինք սոյն վկայութեան զօրութիւնը մեր շրթունքներուն եւ մեր կեանքին մէջ: Այսօր ժամանակն է որ մենք ալ հառաչենք Եսայիի պէս, «Երանի՛ թէ երկինք ճեղքելով վար իջնէիր»: Բայց Հոգին մեր մէջն է, առնենք զԱյն, վերանորոգուինք Անով:



ՅՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՅԻ

Ձենք սիրեր դայն, ո՛չ լոյս, ոչ գեղեցկութիւն ունի, իր երեսը սեւ է սրտին պէս: Իր շարժումներն ու կատարած անարգ դերը մեր գգուանքը կ'արթնցնեն եւ օձի մը նայածի պէս կը նայինք անոր վրայ: Տակաւին օգտակարութենէ զերծ չէ խորհիլ իր մասին: Յուդա ցոյց կուտայ որ չարաչար գործածուած ազատութիւն մը ո՛ւր կրնայ հասցնել անմահ հոգի մը: Հոգեւոր պարտութեան մը պատմութիւնն է իր կեանքը եւ ապացոյց մը Սատանային կործանարար գործունէութեան եւ դժոխքի դրանց ուժին:

Յուդայի կեանքը ուժեղ ազդարարութիւն մըն է, օգտուինք:

I Յուդայի ներքին կեանքին վերլուծումը.—

Յուդա ներքին հոգեւոր կեանք մը ունեցա՞ւ երբեք: Այս մարդուկը ինչպէ՞ս աշակերտ եղաւ Յիսուսի եւ ինչո՞ւ հետեւեցաւ Անոր: Այս հարցերն են որ կրնան լոյս մը նետել Յուդայի սրտին վիճակին վրայ:

Յովհաննու Զ.րդ գլխին մէջ բացատրուած է իրական աշակերտութեան եւ հոգեւոր կեանքին պայմանները: Կը տեսնենք որ Աստուծոյ շնորհքին մէկ պտուղն է այս: Հայրը պէտք է քաշէ, սորվեցնէ եւ սույ Յիսուսի:

Կայ նախ շնորհքի այց մը, որ ինքնադժգոհութիւն եւ անօթութեան գիտակցութիւն կը բերէ թմրած մեղաւորին: Ասոնք են արթնցողները: Աստուած անցած է այդ սրտին մօտէն եւ քաշած է զայն: Ապա Աստուած այդ սրտին կը սորվեցնէ իր վիճակը: Յոյց կուտայ իր անյոյս եւ անդարմանելի կորուստը: Կը սորվեցնէ նաեւ խոստովանիլ, յուսալ եւ վստահիլ: Հաւատալ ներման, թողութեան եւ նոր կեանք մը ապրելու կարելիութեան:

Երբ մէկը հասաւ հոն՝ ուր կը տեսնէ թէ Աստուած սէր է, վերջին քայլով մը Աստուած մարդը Յիսուսին կը դրկէ, քանզի մէկը Հօրը քով չկրնար երթալ առանց Որդւոյն: Հայրը ապաշխարողը Որդւոյն կը դրկէ, որպէսզի Գառը վերցնէ անոր մեղքերը, տիրէ անոր սրտին: Մեղաւորը ալ Փրկ-

կիչ մը ունի, իսկ Որդին ալ կ'ստանայ շնորհքով փրկեալներու Պատուոյ լէգէոնները, որոնք յաւիտեան մորթուած Գառին երգը կ'երգեն:

Մարդը իր կողմէն կը պահէ իր լման ազատութիւնը, տեղի կուտայ Հօրը քաշելուն, կը լսէ եւ կ'իմանայ Ս. Հոգւոյն իրեն սորվեցուցածը եւ միշտ նոյն Հոգւոյն հրաւերին փոխան, որ զինքը Յիսուսի կը դրկէ, մեղաւորը կ'ըսէ, «Ելլեմ երթամ իմ Հօրս եւ ըսեմ Անոր, Հայր, մեղանչեցի»: Հօրը ներկայութեանը մէջ խաչեալին ոտքը Ս. Հոգւոյն ազդեցութեան տակ, խորտակեալ եւ զղջացող սրտին մէջ կ'ստեղծուի նոր մարդը:

Մեղաւորը այսպէս Յիսուսի աշակերտ կրնայ դառնալ:

Յուդա սակայն այս ճամբէն չէ՞ անցած: Հայրը ո՛չ զինքը քաշեց, ո՛չ սորվեցուց, ո՛չ ալ Յիսուսի տուաւ զայն: Յուդա մարդ մըն է, որուն սիրտը բարոյական պահանջք չգգար: Ան կը սպրդի աշակերտաց մէջ եւ կը հետեւի Քրիստոսի: Աստուծոյ անքննելի մտքին մէջ կայ նախազիտութիւն մը եւ նախասահմանութիւն մը, այդ պատճառաւ ալ պէտք էր որ Յուդա հետեւէր Յիսուսի եւ Յիսուս ալ ընտրէր զայն: Սակայն քանի որ Աստուծոյ միտքը ծածուկ էր Յուդայի, իր կորուստը Անոր նախասահմանութեան պէտք չէ վերագրել: Աստուծոյ են փառքն ու զօրութիւնը, եւ ո՛վ կրնայ Անոր մէկ որոշումին դէմ խօսիլ, սակայն ես կը յիշեմ ո՞ր Ան նաեւ մեղաւորին կորուստը չուզէր, եւ չէ՞ որ Յուդա մօտէն հետեւելով Յիսուսի, ամէն առիթ ունէր այդ կենդանի հաղորդակցութեամբ ստանալու լոյս, ներում եւ կեանք, սակայն չկրցաւ օգտուիլ:

Յուդայի կ'իյնայ իր պատասխանատուութեան բովանդակ ծանրութիւնը, անոր համար որ, ինքը Աստուծոյ փրկարար ծրագիրը գիտնալով, գիտնալով նաեւ որ Աստուծոյ Գառը մորթուելու համար մատնիչի մըն ալ պէտք կայ, սրտի ցաւով բայց հերոսական որոշումով մը չէր որ յանձն առաւ մատնիչութեան ամօթալի եւ անիծեալ դերը... Ո՛չ երբեք. Յուդա բոլորովին անտեղեակ թէ՛ Աստուծոյ նախասահմանութենէն եւ թէ՛ իր վախճանէն, Յիսուսի կը հետեւի ներկայի եւ անմիջական ապագայի մը հաշիւներով: Կ'երագէ փառաւոր, երկրաւոր Մեսիայութիւն մը, մեծնալու եւ հարստանալու տեսիլքը օրէ օր կ'օրօրէ զինքը անոյշ երագներով, եւ քանի ուշանար իրագործումը, այնքան աւելի կը մաշէր, կը մարմաշէր իր սիրտը:

Եւ սակայն ամէն երազ կը ցնդի: Քրիստոս փոխան քաջալերելու այդ փառաւոր Մեսիայու-

թեան յոյսերը, ամէն առթիւ կը յանդիմանէ իր աշակերտները: Աւելի՛ իր երեսը ամէն օր հաստատապէս կը դարձնէ խաչին: Խաչին՝ իր ամօթովը, իր չարչարանքներովը, իր խայտառակութիւններովը:

Յուդա յուսախաբ է. ո՞ր է Մեսիայութեան աթոռը, ու՞ր է ամօթալի մահ մը: Կը գրգռուի: Կը տեսնէ որ սխալած է: Եւ քանի որ ոեւէ բարոյական պահանջքով չէր հետեւած Յիսուսի, Ան իր այդ խաչին իտէալովը «իւր լաւագոյն բաժինը» չէր կրնար ըլլալ:

II Յուդայի սանձաւորն ու ցտացած կոչերը.—

Օրէ օր կը պակսէր կենաց իշխանին եւ Յուդայի միջեւ մերձեցման մը կարելիութիւնը: Յուդա կարծեց որ Յիսուս խաբած էր զինքը: Խորհեցաւ հետեւիլ յաղթական թագաւորի մը, բայց ամէն օր զենեակ Գառնուկ մը տեսաւ: Եզրտկացուց նաեւ որ իրապէս զէջ գործ մը, անշահ գործ մը ըրած էր Նազովրեցիին յարեւով: Իր պիւրքը խախտած էր եւ հրէից մօտ ալ կարելիութիւններ չկային իրեն ի նպաստ: Մանաւանդ որ իր գաւառակիցները Յիսուսի էն անհաշտ թշնամիներն էին, ու իր վարկը անոնց մօտ էր որ ինչ կած էր:

Յուդա խաբուած եւ փնտրուած...: Մինչ իր միտքը կը փոթորկի, դժոխքէն թռչած կայծ մը կ'իյնայ իր գանկին մէջ, կարմիր լուսով մը շրջապէսէն զինքը: Նախ վրէժ առնել Նազովրեցիէն, որ խորտակած էր իր ապագան, ապա ջանալ դարձ մտել պալատները, իշխաններուն մօտ շնորհք գտնելով: Խաւարի իշխանը կը գործէ, մահուան սերմը ցանուած այդ մութ սրտին մէջ օր ըստ օրէ կ'աճի, կը խորանայ, ձեւ կ'առնէ: Ծրարագիրը ամէն օր կը հասունանայ: Տակաւին դիւային վարպետութեամբ մը ոչ սքի բան յայտնեց: Ճարպիկ, պաղարիւն եւ դիւանագէտ եղած ըլլալու է Յուդա:

Սակայն Տէրը կը հակէր: Եթէ աշակերտները չտեսան, Տէր Յիսուս գիտակից էր այդ կեղծիքին: Անոր թափանցող նայուածքէն ի՞նչ խուսափած էր ցարդ: Ո՞վ տեսաւ Նաթանայէլի աննենգ սիրտը: Յակոբի ջրհորին քով ո՞վ ճանչցաւ թշուառ մեղաւորուն, որ սակայն անօթի ու ծաւալ էր արդարութեան: Ո՞վ էր որ հետզհետէ ի լոյս հանեց հրէից իշխաններուն զազիր եւ մանուածապատ խորհուրդները: Յուդա բացառութիւն կրնա՞ր կազմել: Ո՛չ:

Յովհաննու Զրգ գլխին վախճանը կարդանք: Մինչ երկինքէն իջած Մարգուն յայտարարու-

թիւններուն վրայ իր հեռուորդներէն կարեւոր մաս մը կը խոռովի, կը գայթակղի, կը բաժնուի Քրիստոսէ, Պետրոս, Ներմեռանդ սրտով իր եւ իր ընկերներուն կողմէն, սիրոյ, հաւատքի եւ վստահութեան վկայութիւն մըն է որ կուտայ, «Տէր, որո՞ւ պիտի երթանք, Դուն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս»: Յուդա հեռու է այսպէս հաւատալէ, բայց քանի որ Պետրոս խօսեցաւ, ինք կը լռէ, յուսալով որ Յիսուս իր վրայ ալ նոյն աչքով պիտի նայի, իբր հաւատարիմ հետևորդ: Սակայն ի՞նչ կ'ըսէ Յիսուս, «Ես ձեզ տաաներկութեղ չընտրեցի՞» և ձեզմէ մէկն ալ Սաւառայ է:

Այս ուժգին արտայայտութիւնը ցոյց կուտայ Տէրը ի սորաթափանց դատողութեան եւ զանազանութեան կարողութիւնը: Միեւնոյն ատեն որոշ յանգիմանութիւն մը եւ դարձի կոչ մ'է Յուդայի: Եթէ իր մէջ մեղքը յղացուած էր դեռ լման չէր գործադրուած: Այս յանգիմանութիւնը, որ Տէրը սէրը (ձեզ ընտրեցի) և Յուդայի ատենութիւնը (ձեզմէ մէկը Սաւառայ է) զէմ առ զէմ կը գնէ, եւ ի՞նչ ընդունուէր անկեղծ և անվերապահ զղջումով, ի՞նչ բարեբար արդիւնքներ չէր կրնար տալ:

Յանգիմանութեան յետոյ սիրոյ կոչը: Ընթրիքի զիշերն է: Փառաց Տէրը «ծառայի կերպարանք» առնելէ յետոյ, իր քաղցրիկ խոնարհութեան մէջ կ'ստանձնէ նաեւ զերի պաշտօնը: Ռտընլուան կ'սկսի, ոտնլուա՞ որ կը խորհրդանշէ թէ՛ խոնարհութեան կեանքն ու գործը, թէ՛ ալ Աստուծոյ խօսքին եւ հոգիին ու արեան սրբացումը: Ամենուն հետ Յուդայի ոտքերն ալ կը լըւայ... գոնէ այդ ոտքերը ըլլային այն գեղեցիկ ոտքերը «որոնք խաղաղութեան աւետիս» կը տանին, աւա՛ղ: Այդ լուսացուածները անոնք են որոնք «շուտ են արիւն թափելու» եւ որոնց շուրջը սեւ անդունդէն ելլող չարաշուք բոցը միայն կը լուսաւորէ: Անտարակոյս այստեղ Փրկչին սէրը եւ խոնարհութիւնը, խառնութիւն չղընելը սիրոյ կոչ մ'էր Յուդայի: Քանի՞ խստասիրտներ խորտակուած են Փրկչին սիրոյն եւ հեղութեան առջեւ: Յուդայի սիրտը սակայն, կարծես այրած աւազով ծածկուած է: Քաղցր, նրբին ծաղիկներ հոն չեն կրնար տեղ գտնել և ապրիլ վրէժխնդրութիւն եւ եսասիրութիւն խուլ եւ անընդունակ են լսելու սիրոյ եւ խոնարհութեան քաղցրիկ մրմունջը:

Ընթրիքի ընթացքին վարդապետը կը խօսի եւ կը սորվեցնէ: Գուրգուրանքով կը ծոխ իր սիրելի աշակերտաց վրայ, զանոնք ճշմարտութեան անյաղթելի սկզբունքներուն վրայ հաստատելու

համար: Բուպէները հանդիսաւոր են, սակայն Տէրը կը վրդովի: Իր զգայուն դիտակցութիւնը կը հասկնայ որ թոչող բուպէները կը մօտեցնեն դաւաճանին ժամը: Կարծես թէ Յուդայէ կ'ելլէ պիղծ ազդեցութիւն մը որ կ'սպաննէ միջոյնը: Տէրը կ'անգրադառնայ տխրութեամբ «Իր հասցը ուտող եւ Իրեն դէմ կրունկ վերցնողին», «Տէգմէ մէկը զիս պիտի մատնէ»:

Աշակերտները իրար կ'անցնին միամտաբար հարցնելով, «Միթէ ե՞ս եմ»: Յովհաննէս, անհամբեր Պետրոսի նշանին վրայ Տէրը կուրծքին վրայ կ'իյնայ ալալալած հարցնելով, «Տէր, ո՞վ է ան»: Յուդա ալ պազօրէն կը հարցնէ, «միթէ ե՞ս եմ»: Յիսուս պատասխան տուաւ, «Անիկա է, որուն պատառը թրջելով կուտամ, և թրջելով պատառը Իսկարիօտացի Սիմոնէսն Յուդայի տուաւ»: Տէրը այս կերպով Յովհաննէսի «ան է», եւ Յուդայի ալ «դուն էս» ըսած եղաւ:

Սակայն այս պատառը նաեւ Յիսուսի գերագոյն կոչն էր Յուդայի: Նախ կ'երեւի Քրիստոսի դիտակցութիւնը եւ թափանցողութիւնը: Եթէ աշակերտք լուր չունէին եւ իրար կ'անցնէին, եթէ Յուդա զանոնք խաբելու չափ ճարպիկ եղած էր, Քրիստոս զայն մատնանշելով ցոյց կուտայ իր տեղեակ ըլլալը: Ի լոյս կուգայ նաեւ իր վեհանձնութիւնը, քանզի պիտնալով մէկտեղ, այնքան լաւ կրած էր Յուդան որ մարդ բան չէր կասկածած: Դաւաճան մը ամէջնելու չափ խօսուին չէ՞ Փրկչին ընթացքը: Կ'ըսուի դարձեալ թէ սեղանին գլխաւորը թրջած պատառ մը կը հրամայէր անոնց զորս մասնաւոր պատուել կ'ուզէր: Քրիստոսի այս ժեշտը իր քօղազերծեալ հեղինակութեան հետ, սիրոյ վերջնագոյն փորձ մըն էր: Այդ բուպէին Յուդա կը կենայ մահուան եւ կեանքի շաւիղներուն իրարմէ բաժնուած տեղին ծայրագոյն կէտին վրայ: Ի՞նչ պիտի ընէ, ա՞ջ թէ ձախ:

III Յուդայի մատնութիւնն ու վախճանը.—

«Եւ պատահէն ետքը Սատանան անոր ներսը մտաւ»: Լսեցէ՛ք Յուդայի մահուան պատմութիւնը: Յարգ Յիսուսի ուսուցումները եւ Յուդայի ուզուած գանազան կոչերը նոյնքան պատգամներ էին, որոնք կրկին եւ կրկին շօշափեցին այդ քար սիրտը, հոն փրկարար հաւատք մը արթնցնելու համար: Այս վերջին առիթը լոյսի վերջին շողն էր իրեն համար, ա՛յլ մարեցա՛ւ կեանքի պլպլուն պատրոյգը: Իր համոզումներուն սիրոյն, ի խնդիր վրէժի, դիւրքի եւ դրամի Յուդա խեղդեց ամէն ձայն եւ ամուր փակեց իր

սիրտը: Եւ ահա, ալ դաշինք կնքուած է գերեզմանին հետ, և կը զօրանայ իր աստուծովը՝ Սատանայով: Յարգ Յուդա խաղացած էր մեղքին և Սատանային հետ: Հիմա Սատանան անոր ներսն է, եւ ինք խաւար իշխանին խաղալիք դարձած է: Անդառնալի, անդարմանելի եւ մշտնջենական կերպով մը Սատանան գրաւած է զայն, Յուդան դարձնելով «Որդի կորստեան»:

Մահու եւ կենաց պայքար մ'էր այս, մինչ դժոխք իր աթոռը կը զետեղէր այս սրտին մէջ. անտարակոյս Յուդայի դիրքը կը պատկերացնէր իր ներքին ահեղ յեղափոխութիւնը: Յովհաննէս, որ Յիսուսի պատասխանէն ի վեր անտարակոյս կը դիտէր անոր դէմքը, ի՞նչ զարհուրելի, աննկարագրելի երեւոյթ մը տեսած ըլլալու է: Յուդա ա՛յլ մեղաւոր մը չէր, դեւ մըն էր:

Տէր Յիսուս Ինքն ալ պիտէր որ ալ իրենց միջեւ ձգուած էր «այն մեծ անդունդը», որուն մէկ կողմէն միւսը անցնիլ հնարաւոր չէ: Ուստի զայն դուրս դրկելու համար կը հրամայէ, «Ինչ որ պիտի ընես շուտ ըրէ»: Տէրը կը պահէ իր մեծութիւնը, իր կեանքը Յուդայի ափին մէջ չէ՛, ինք տեղեակ է անոր ծրագրին. եթէ մատնութիւնը կը թուլատրէ, չօրը ծրագրին սիրոյն է:

Եւ ապա ի՞նչ մեծ շնորհք Տէր Յիսուսի կողմէն հանդէպ իր մահացու թշնամիին: Թողուլ որ Յուդա այդքան դիւրին կերպով դուրս ելլէր... քանզի մէկը չհասկցաւ, թերեւս միայն Յովհաննէս, սակայն եթէ յայտնապէս խայտառակէր զայն, ինչե՛ր չէին կրնար պատահիլ. ո՞վ կրնար սանձել կրակոտ Պետրոսն ու բռնել իր թելը... ուստի Տէրը զայն անհուն իշխանական վեհանձնութեամբ մը կ'արձակէ: Երթալու էր նաեւ միւսներուն սիրոյն, Փրկչին վերջին հրաժեշտի խօսքերը մատնիչին համար չէին:

Այսպէս գնա՛ց կորստեան որդին, «որպէսզի գրուածը կատարուի»: Աստուծոյ նախասահմանած օղակներէն մին եւս դարբնուեցաւ, եղա՛ւ, լմնցա՛ւ: Սակայն եղաւ, քանզի մէկը կեանքի տեղ մահ, լոյսի տեղ խաւար, սիրոյ փոխան ատելութիւն ընտրեց: Երկինք ու երկիր վկալ եղան այս զարմանալի կործանման: Ահա թէ ինչո՛ւ «Վա՛յ այն մարդուն... աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար»:

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

ՏՐՏՈՒՆՉ ՉԸՆՆԵՐՔ

○○○○○ — ○○○○○

Աստուծո՞ժ հաւատարիմ է, որ ձեզ պիտի
չթողու ձեր կոթողութենէն աւելի փորձուիւ
Ա. Կոր. Ժ. 10-13

Բայց քանի որ աշխատանքի վաճառ անցած
չէ տակաւին,
Ե՛լ, թօթափէ արցունք, երազ եւ տրտունջ-
ներդ անտեղի:
Արցունքն՝ յաճախ տկարութիւն, երազն՝
ցընորք մ'է ոսին,
Իսկ տըրտունջը՝ հոգիներու մահացու թողն
է լեզի...

Թերթիկի մը վրայ հետեւեալ պատմութիւնը
կարդացի. —

Սաստիկ կը դժուարէի կրելու այն խաչը որ
խիստ ծանր կը թուէր ինծի: Օր մը մինչ ես դառ-
նորէն կը գանգատէի, մեծ թմրութիւն մը կոխեց
վրաս եւ ես խորունկ քունի մէջ ինկայ: Յան-
կարծ փառահեղ լոյս մը ծագեցաւ բոլորտիքս եւ
ես տեսայ Տէր Յիսուսը ճիշդ մօտս կեցած: Խոց-
ուած ձեռքը քնքշութեամբ գլխուս վրայ դնելով
լուրջ շեշտով մը հարցուց ինծի,

— Զաւակս, դժգոհ ես քեզի տուած խաչէս:
Եթէ ազատութիւն տայի, պիտի փափաքէ՞ր
դունլ քեզի ընտրել կրելիք խաչդ:

Հիացած այս անակնկալ առաջարկէն՝ «Այո»
պատասխանեցի անմիջապէս:

— Լաւ ուրեմն, ըսաւ Տէրը, եկուր ինծի հետ:
Ուրախութեամբ հետեւեցայ Անոր:

Շատ չանցած ընդարձակ սրահ մը մտանք:
Այդ լայնարձակ սրահը լեցուած էր մեծութեան,
գեղեցկութեան եւ արժէքի համեմատութեամբ
ամէն կարգի խաչերով:

— Քու ուզած խաչդ ընտրէ քեզի, ըսաւ երկ-
նային Առաջնորդս, ընտրէ զայն որ ամենէն յար-
մարը եւ հաճելին կը թուի քեզի:

Ընտրելու համար ոչ մէկ շուարում կամ դժ-
ուարութիւն ունեցայ: Առաջին վայրկեանին իսկ
սիրտս զբաւուեցաւ սրահին ճիշդ մէջտեղը գե-
տեղուած ադամանդակու խաչէ մը, որ իր շո-
ղարձակ մեծափառութիւնովը միւս բոլոր խաչե-
րը կը նսեմացնէր: ԱՅՍ ԽԱՉԸ կը խորհէի մըտ-
քիս մէջ, իմինէս հազար անգամ աւելի շքեղ եւ
թեթեւ ըլլալու է: Բայց ի՛նչ մեծ եղաւ զարմանքս
երբ տեսայ որ զայն իր տեղէն շարժելն իսկ կա-
րողութենէս շատ վեր էր: Հեռացայ:

«Այս մէկը աւելի թեթեւ ըլլալու է» բացաղան-
չեցի ինքնիրենս, ձեռքս ուրիշ խաչի մը երկա-
րելով: Արդարեւ դիւրութեամբ ալ կրցի վերցնել:
Տեսքը խիստ շնորհալի էր: Սոսկ թարմ եւ
ծաղկաւաքօղ ճիւղերով հիւսուած կը թուէր ինծի:
Բայց հազիւ թէ ուսիս դպած էր, երբ սուր ճիւղ
մը թռաւ կոկորդէս եւ խաչը գետին ինկաւ: Ա-
նոր հրապուրիչ ծաղիկներուն ներքեւ այնպիսի
փուշեր պահուած էին որ ուսս իսկոյն արիւնյը-
ւայ ծակծկեցին:

«Բայց, ա՛խ, Տէր իմ, աղաղակեցի, անպայ-
ման պէ՞տք է որ խաչ մը ընտրեմ»:

Տէրը մեղմիւ ձայնով պատասխանեց ինծի. —

Կ'ուզես ապրիլ առանց խաչի՞

Վերջը կ'աղչաս ի սէր թագի.

Առանց խաչի՞...

Առանց թագի՞...

Այս որ լսեցի դարձեալ սկսայ փնտրտուքի:
Ուրիշ խաչ մը տայ որ յարմարագոյնը կարծե-
լով շաղկեցի որ երթամ: Հազիւ քանի մը քայլ
առած էի, երբ զգացի որ անոր ճնշող ծանրու-
թեան տակ ծունկերս արդէն կը կթոռէին: Այս-
պէս յաջորդաբար շատ խաչեր վերցուցի ու դրի՝
միշտ փարողութենէս աւելի ծանր գտնելով գա-
նունք:

Վերջապէս բոլորովին պարզ եւ անշուք տե-
քով դիւրատար խաչ մը ընտրեցի: Բաւական կը-
րելէ յետոյ այնքան յարմար գտայ զայն ուսե-
րուս եւ տարողութեանս՝ որ Տէրոջը դառնալով
հարցուցի,

— Տէր, կը թոււարե՞ս ինծի միշտ ԱՅՍ ԽԱ-
ՉԸ կրել:

Առաջնորդս ժպտեցաւ եւ պատասխանեց «Այո»:
Որքան երջանիկ էի ինծի վիճակուած այդ
թեթեւ խաչին համար: Կը կարծէի թէ ուսերուս
վրայ բեռ մը կը կրեմ որ ծանրութիւն չունի:
Ուրախութենէս նշմարած չէի նոյնիսկ որ բնա-
կարանիս մօտենալու աստիճան երկար ճամբոր-
դած էինք:

Մեկնելէ առաջ, Տէրը կայնեցուց զիս եւ ու-
սիս խաչը մատնանշելով ըսաւ,

— Լաւ նայիր, չե՞ս ճանչնար այս խաչը:

Վայրկեան մը դիտելէ վերջ՝ հիացումով եւ
ապշութեամբ աղաղակեցի, «Բայց այս ընտրածս
իմ նախկին խաչս է»:

Այս խօսքին վրայ Տէրը վերացաւ քովէս ու
ես արթնցայ:

Օտար էջէ մը քաղուած վերի տողերը գրա-
ւիչ պատմութիւն մը ըլլալէ աւելի, շինարար եւ

հոգեպնդիչ ներշնչում մըն է: Այս չար ժամանակներուն մէջ, ամէն մարդ, եւ մասնաւորապէս «հաւատքի ընտանիքէն» եղողները անխուսափելի խաչակրութեան ենթարկուած են: Ոմանք անգործութեան եւ ծայրայեղ թշուառութեան, այլք տեսակ տեսակ ցաւերու եւ հիւանդութիւններու մատնուած են: Կան ուրիշներ ալ որոնք թէեւ նիւթապէս և ֆիզիքաւէջս բարելաւ վիճակի տէր են, բայց անձնական ծածուկ մտավախութիւններու կամ հոգեւոր ծանր փորձութիւններու մէջ կը գտնուին: Այսպէս կամ այնպէս, Աստուծոյ բոլոր զաւակները անխտիր իրենց ուսերուն վրայ կրելիք խաչեր ունին: Տէր Յիսուս իրեն եկողներուն կ'ըսէ, «Ով որ կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող իր խաչը վերցնէ... ու ամէն օր իմ ետեւէս գայ»: Ամենուս խաչ մը կայ: Բայց որովհետեւ ոմանց խաչը անտանելի ըլլալու աստիճան ծանր կը թուի իրենց, կը փորձուին կամ խաչը իրենց ուսէն նետել եւ կամ տրտնջել ինչպէս տեսանք վերի պատմուածքին մէջ: Այսպէս, տրտմութենէ թերահաւատութեան, թերահաւատութենէ յուսահատութեան եւ ի վերջոյ մահացու տրտմանքի կը տարուին, և չեն յիշեր Աստուծոյ խօսքին սա ազդարարութիւնը թէ, «Տրտունջ չընէք, ինչպէս անոնցմէ ոմանք տրտունջ ըրին ու սատակիչէն շարդուեցան»:

Ու դեռ տրտնջելու փորձութեան մէջ գտնուողներ յիշելու են թէ զթոտ և ամենազէտ Փրկիչն է որ իր ամէն մէկ զաւակին կարողութեան համաձայն խաչեր կուտայ (Բ. Կոր. ԺԲ. 7-12): Եւ դարձեալ իւրաքանչիւր խաչ մասնաւոր օրհնութեան համար կը տրուի մեզի: Չմոռնաք նաեւ թէ ոնէ խաչ, ամենէն աւելի ծանրակիր խաչերը, Աստուածային գործիքներ են որ մեզ սրբացման, բարձրացման և փառաւորման կը մղեն (Բ. Կոր. Դ. 16-18):

Այս հաւատքով տոգորուած իւրաքանչիւր խաչակիր հաւատացեալ նոյնիսկ եթէ «կրակէ և ջուրէ» եւ կամ «մահուան շուքի ձորէն» ալ անցնելու ըլլայ, պիտի կարենայ երգել. —

Առանց սրտունջի, առանց տրտմութեան,
Վերցուր ով հոգիս, խաչըդ պատուական:
Տէրն է անխնայիւր, զըթոտ, իմաստուն
Մատակարարը բոլոր խաչերուն:
Ինչ չափով որ դուն ընդունիս տանջանք,
Նոյն չափով պիտի վաճլես խըրախճանք:

Պայքարը դա՞ռն է, խաչըդ ահաւո՞ր,
Յաղթողին թագն է նոյնքան փառաւոր:



ՕՐՏԱԿԱՐ ԿԵՍՆՔ ՄԸ

Ամէն բան պատրաստ է,
Հարսնիք եկէք:
Մատթ. ԻԲ. 6

Այս տարուան Ապրիլ չորսը մեզի համար օր մըն էր սուգի ու նաեւ ուրախութեան, որուն մէջ մեր սիրելի մեծ մայրիկը Ռաքէլ Ուղունպողոսեան բաժնուեցաւ աշխարհէն, միանալու երկնային սրբոց խումբին: Սուգի՝ վասնզի մեր թանկագին մայրիկը կը կորսնցնէինք, ուրախութեան՝ վասնզի անիկա իր սիրելի Փրկիչին քով գացած էր:

Ծնած է ի կեսաբիա, 1860ին, որպէս դուստր քարոզիչի մը, մեծցած քրիստոնեայ դաստիա-

Մէն մի շիթ քըրտինք, արիւն եւ արցունք,
Փոխուած պիտ' գտնես երբ հասնիս բարձունք:
Սուգիդ շեշտերէն հոն երգ պիտ' հիւսես,
Խիճերէն յակիւթ քաջ ոստրէին պէս:

Ա՛րդ, խաչըդ պարծանք համարէ քեզի,
Թող արցունքի տեղ՝ ժպիտ հըրկիզի:
Փոխան տրտունջի՝ փառաբանութեան
Աղօթք ու երգեր թող վեր բարձրանան.
Յայնժամ ամէն բան անշուշտ ի բարին
Գործակից կ'ըլլայ զԱստուած սիրողին:

Շատ չանցած, հոգի՛ս, տառապանք ու ցաւ,
Պիտի վերածուին հրճուանքի անրա՛ւ:
Շատ չանցած, փոխան այս պիղծ աշխարհին
Պիտի ժառանգես փառքըդ երկնային:
Շատ չանցած հոգի՛ս, խաչըդ կը վերնայ,
Ու դուն կ'ըստանաս թագըդ շափիւղա՛յ...

Այսպէ՛ս, մեր ամենադառն տագնապի պահեւորուն մէջ՝ յուսահատութեան, դժգոհութեան եւ տրտունջի «մեզ դիւրաւ պաշարող մեղքերուն» յաղթելու ամենաապահով և գործնական միջոցն է, Պօղոսի պէս անդադար կրկնել, «Գիտենք որ ա. մէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուած կը սիրեն»:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

րակութեամբ եւ 14 տարիքին ընդունած Յիսուս Բրիստոսը որպէս իր անձնական Փրկիչը: Այնուհետեւ նա օր ըստ օրէ զօրացաւ հաւատքի մէջ:

1914ի ընդհանուր պատերազմի ճգնաժամային վայրկեաններուն մէջ ազօթքով զիմազրաւեց ամէն նեղութեան, օգնելով նաեւ իր շուրջ գտնուող վիճակակիցներուն, Աստուծոյ խօսքով զանոնք մխիթարելով, քաջալերելով եւ որպէս Բրիստոսի ճշմարիտ մէկ աղախինը անձնական օրինակով անոնց առջեւէն քաշելով:

Անցեալ 6-7 տարիներու ընթացքին Տէրը երկու անգամ պատեհութիւն շնորհեց իրեն Ամերիկայէն հոս մեզի այցելութեան գալու: Առաջուց զինք միայն անունով կը ճանչնայի շատ փոքր տարիքիս մէջ, քանզի նա մեզմէ շատոնց բաժնուած էր: Շատ անգամ լսած էի իր ազօթքին, հաւատքին ու կեանքին մասին, բայց այս վերջին երկու այցելութեանց առթիւ կրցի զայն մօտէն ճանչնալ եւ հաստատեցի թէ լսածներս շիտակ են:

Իմ վրաս ամենէն շատ ազգած են իր հետեւեալ յատկութիւնները.—

Ա. Ձկար դէպք մը որուն առջեւ նա ընկրկէր, ընդհակառակն ամէն դժուարութեանց կը դիմադրէր նա հաւատքի վահանը իր ձեռքին մէջ: Իրեն նշանաբան ըրած էր Հռով. Բ. 28, «Սակայն զիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուած կը սիրեն»: Ամէն ինչ որ պատահէր, ուրախ կամ անհաճոյ, նոյն հանդարտութեամբ կ'ընդունէր ըսելով «Պու շէյ Կօգարտան տըր»: Այս բանը վերէն է:

Բ. Անոր կեանքը աղօթքի կեանք էր: Օրուան մասնաւոր ազօթքի ժամերէն զատ եթէ դեռ ունենար պարապ ժամեր, զանոնք ալ ազօթքի կամ Սուրբ Գրոց ընթերցման կը յատկացնէր:

Իր ամենէն մեծ փափաքն ու ջանքն էր մեծցնել քրիստոնեայ գաւազներ ու թոռներ. մեզ ուղարկած նամակներուն մէջ մեծ տեղ մը յատկացուած կ'ըլլար Ս. Գրքին համարներուն եւ անոնց բացատրութեան: Կը քաշէր դէպի յառաջ նայելով միշտ Յիսուսի, ցոլացնելով նաեւ իր շուրջ այն փառաւոր լոյսը զոր ինք կ'ընդունէր Անկէ:

Իր մահէն քանի մը շաբաթներ առաջ նա խաղաղ սրտով զինք այցելողներուն կ'ըսէր, «Ամէն ինչ պատրաստ է, Տէրը երբ որ ուզէ կրնայ զիս իր քով առնել:

Ու սիրելի Փրկիչը լսեց իր ձայնը եւ յարմար սեպած ժամանակին եկաւ զայն իր քովն առնելու:

ՍԻՍԱԿ ԳԱԼՍՅԱՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ԿՏԱԿ ՄԸ

Հետեւեալը կտակն է մեր սիրելի քրոջ Ռաբէլ Ուզունպօղոսեանի, որ իր մահէն յետոյ դրկուած է իր դստեր՝ Տիկին Հայկանուշ Գալայճեանի: Կը հրատարակենք զայն յօգուտ Բանբերի ընտանիքին: Այսպիսի կտակներ ակելի արժէքաւոր են քան մեծ հարստութիւններ եւ մեծամեծ գու. մարներ:

ԽՄԲ.

Սիրելի զաւակներս, Հրանոյշ Նալպանտեան, Հայկանոյշ Գալայճեան, Արուսեակ Գազանճեան,



Ձեզի յայտնի է որ ձեր հայրը ու մայրը զձեզ ձեր պզտիկ հասակէն Աստուծոյ օրէնքներուն համաձայն եւ Անոր վախովը եւ Ս. Գրքի խօսքերուն մէջ եւ Բրիստոսի հոգիովը եւ աշխարհի մեղքը վերցնող Աստու-

ծոյ Դառին շնորհքին մէջ մեծցուցինք: Ինչպէս որ Պօղոս առաքեալ կը գրէ Տիմոթէոսի «Արդ զուն իմ որդեակս» ըսելով, ես ալ նոյն հոգիով Բ. Տիմ. Բ. 1-4 իբր կտակ կը թողում ձեզի խնդրելով որ զուք եւս ձեր զաւակները նոյն հոգիով մեծցնէք: Ճժիթ. Սաղմոսը կտակ կ'ընեմ բոլոր թոռնիկներուն, անիկա թէեւ շատ երկայն է, բայց կարգացէք անոնց եւ բացատրեցէք Աստուծոյ ճամբաները, որպէսզի անոնք, իրենց ցաւերուն մէջ մխիթարութիւն ըլլան:

Քանի որ Յիսուս ալ երկինք երթալով Աբբա Հօրը ալ կողմը նստած մեզի համար կը բարեխօսէ եւ մեզի համար տեղ ալ պատրաստած է (Յովհ. ԺԴ. 1-4), բաղձանքս է որ բոլոր զաւակներս եւ թոռներս եւ բոլոր հոգեւոր եղբայրներս ու բարեկամներս երկինքի մէջ մեր Տէր եւ Հօր Աստուծոյ ու սքանչելի Երրորդութեան ներկայութեան հաւաքուած բոլոր հրեշտակներուն եւ սուրբերուն հետ ուրախութեան եւ փառաբանութեան երգեր երգենք Յայտ. Է. 9-17ի համաձայն:

Չաւակներս, ջանանք Աստուծոյ մեզի տուած շնորհքով, Անոր խոստումներուն հասնելու համար Սատանային, աշխարհի եւ զերեգմանին վրայ յաղթութիւն տանիլ մեր Փրկչին ու Տէրոջ նման: Փառք ըլլայ Անոր Ս. Անուան (Յայտ. ԻԱ. 6-8, ԻԲ. 16-21): Մեր Տէրոջը Յիսուս Բրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ: Ամէն:

Մնաք բարեաւ, յուսով եւ որ երկինքի մէջ պիտի միանանք: Ձեր մայրը Ռ. Պօղոսեան



ՅՈՒԴԱՅԻ ԿԵԱՆՔԷՆ

Մեղքը միշտ կը խոտանայ բայց կը խաբէ: Վրէժ, պատիւ, դրամ: Այս է իր իտէալը: Սատանան բոլորը կը խոտանայ: Եթէ պահ մը Յուդայի սիրտը ցնծաց դիւային հրճուանքով, կը տեսնէք թէ իշխանները ինչպէ՛ս խաբեցին զինքը: 30 կտոր արծա՛թ: Սա հասարակ գերիի մը համար որոշուած սակագինն էր (Ելից ԻԱ. 32) եւ իրականութեան մէջ պզտիկ գումար մը: Իր կործանարար գագոյններով խաբուելէ յետոյ, նիւթական վարձքն ալ կը վրիպէր: Բոլոր ժամանակը դրամի հետ խաղացած, զայն երազած, զայն սիրած, գողցած, պաշտած էր: Ստրուկը դարձած անարգ մամոնային, որ ստուգիւ գաժան Տէր մըն է, քանի որ «արծաթսիրութիւնը բոլոր չարաց արմատն է»:

Ոմանք հարցուցած են թէ Յիսուս ինչո՞ւ իրենց խումբին գանձանակը Յուդայի յանձնած էր, քանի որ կը ճանչնար զայն, եւ քանի որ այս աշխարհ վտանգաւոր բան մըն էր իրեն համար:

1) Նախ թելադրուած է թէ «այս բանը եղաւ, որպէսզի Յուդայի դրամասիրութեան ծածուկ մեղքը երեւան գայ եւ որ բժշկութիւն գտնէ» (Heugtenberg): 2) Թէեւ դրամին քսակը Յիսուսի կը պատկանէր, եւ թէեւ Յիսուս գիտէր որ Յուդա գող էր, տակաւին Նա Յուդայի վտահեցաւ գանձը, այս կերպով անոր ցոյց տալու թէ իր (Յիսուսի) սիրտը որքա՛ն ազատ էր դրամասիրութենէ (Bellarmius):

3) Weiss կը խորհի որ Յիսուս Յուդան ընտրեց իբրեւ գանձապահ, քանզի անոր մէջ մասնաւոր յարմարութիւն մը տեսաւ դրամական հարցերու նկատմամբ, եւ նաեւ անոր համար որ չուզեց վրիպեցնել իրերու ընթացք մը, որոնց մէջ Աստուածային տնտեսութիւն մը կը տեսնէր:

4) Կարելի է նաեւ հարցնել Godetի հետ, թէ արդեօք Յիսուս անձա՞մբ ընտրեց Յուդան իբր գանձապահ: Անկարելի՞ է որ այդ բանը աշակերտաց միջեւ կարգադրուած ըլլար, եւ որուն զիտողութիւն չըրաւ Տէրը:

Ինչ որ ալ ըլլայ, աշակերտաց վստահութիւնը, Յիսուսի անշահախնդիր եւ լուսատու հոգեւորութիւնը եւ առ այդ իր ուսուցումները, Բեթանիացի Մարիամին անվերապահ առատա-

ձեռնութիւնը նոյնքան կոչեր էին իրեն իշխելու դրամին, փոխան անոր գերին դառնալու, սակայն կ'երեւի որ իր խոցելի կէտը արծաթսիրութիւնն էր, որուն անձնատուր եղաւ:

Այդ արծաթը զրպանն է երբ Գեթսեմանի կը հասնի: Իր համբոյրին նպատակը Տէրը մատնանշել էր: Կեղծաւոր եւ պաղարիւն, Գեթսեմանիին լուռ պարտէզին մէջ, ջահերու բոցերու եւ զէնքերու ստուէրներուն միջեւ, մատնիչը կուտայ իր նշանը, «Ողջոյն Վարդապետ, եւ համբուրեց զԱյն»: Այս համբուրը Քրիստոսի բոլոր չարչարանքներէն աւելի ծանր կուգայ ինծի: Սակայն Տէրը համբոյրը աւելորդ կը դարձնէ «Ես եմ» ըսելով: Որդին՝ արիւնով լեցուն գաւաթը քիչ առաջ ընդունած էր Հօրմէն եւ զայն խմած էր մինչեւ դառն մրուրը: Նա կ'երթայ չարչարանաց, տաքնապի անմեկնելի եւ անչափելի վշտերով, Խնքինքը յաւիտենական Հոգիին ձեռք պատարագելու: Որդին ինչին կ'երթայ...

Այս միջոցներուն, Յուդայի կաշկանդուած խիղճը կը խորտակէ իր կապերը: Խղճահարութեան եւ զղումի ցաւերը անընդհատ կը խորագանեն զինքը: Կարծես ամէն բոլոր իր առջեւ կը գծուի Յիսուսի կեանքը, եւ զԱյն միշտ արդար, անմեղ, սուրբ եւ ճշմարիտ կը գտնէ: Կը համոզուի այս բանին, եթէ չխօսի, կարծես կրակէ հոսանք մը կը վազէ իր ոսկորներուն մէջ եւ կը լափիլիզէ իր ծուծը: Պէտք է ըսել իշխաններուն: Անոնք թիրեւս իրենց կատաղութեան եւ ատելութեան մէջ սպաննեն զինքը, սակայն աւելի լաւ է այդ բանը գիմազրաւել քան ողջ ողջ այրել իր էութիւնը լափող այդ աներեւոյթ կըրակով: «Մեղա՛յ, անմեղ արիւն մատնեցի»: Քրիստոսի կեանքը իր արժանի գովեստը կ'ընդունի, իշխաններուն մեղքը կը կրկնապատկուի որոնք կը լսեն նոր խոստովանութիւն մը: Սակայն անոնց սրտերն ալ կուրցած են: «Մեղի ի՛նչ, դուն նայէ» սառն ու անկարեկիր, իժերո՛ւ ծնունդներ, որոնք նոյնիսկ չեն յօժարիր անդրադառնալու ճշմարտութեան, կամ օգնելու իրենց մեղսակիցին:

Յուդա կ'ահաբեկի, զրպանի արծաթը կարծես կը ծանրանայ եւ կը վառէ զինքը, արագ զրգուած շարժումով մը անոնց ոտքերուն տակ կը նետէ բաակը: Քսա՛կը նետեց, իր տէ՛րը, իր օրօրուն երազներուն եւ սիրոյն առարկան: Ա՛լ բան մը չէր մնացած Յուդայի, որուն կարենար կապուիլ: Անջուր ամպ մը հովէն քշուած, ահա արմատախիլ ծառ մը:

Երբ Յուդա դուրս ելաւ վերնատունէն «գիշեր

էր» (բաղդաստէ Ծնդ. ԼԲ. 31): Այս կը խորհրդանշէ նաեւ իր բարոյական հորիզոնը: Իր խղճահարուածինը յուզիչ բան է, սակայն Աստուծոյ ուզածին պէս եղած փրկարար տրամութիւնը չէ այս: Այն ատենէն որ Սատանան լման գրաւեց զայն, իր մէջ դադրեցան կեանքի հասնելու բոլոր կարելիութիւնները, և Յուդա այնքան անատակ, անկարող եղաւ դարձի գալու որքան Առաջին օձը, որուն թոյնը հիմա լման վարակած էր իր բարոյական կազմը: Կրնայ խղճահարիւ, տառապիլ եւ զղջալ, բայց իր մէջ չկայ խոստովանութիւն, յոյս, հաւատք առ Աստուած: Զրկայ այն գիտակցութիւնը որ մեղաւորը տեսակ մը յարգանքով եւ երկիւղածութեամբ կը ծռէ Աստուծոյ արդարութեան ատշեւ, և որ ըսել կուտայ «Մեղք գործեցի», «Ողորմէ՛ ինծի մեղաւորիս»:

Իր զգացածը, երկրի վրայ դժոխքին տուայտանքն է արգէն: Իր սիրտը վէրք մըն է որ անդադար կը կոտտայ առանց դարմանի եւ բժշկութեան կարելիութեան, իր զանկին տակ անեղ փոթորիկ մը կ'ոռնայ առանց խաղաղութեան յոյսին: Տարտարոսի ուժերը ամենի ճնշումով մը բռնած են իրենց որսը, որ կը հեծծէ ու կը սպառի: Անպատմելի է այս փորձառութիւնը, աննկարագրելի է անտարակոյս: Ո՛վ կրնայ չափել այդ յոգնած ու խորտակուած սրտին տանջանքը, ցաւը այդ մարդուն որ յոյս չունի եւ Փրկիչ չունի, որ ա՛լ ելք չպիտի ունենայ...

Իր փոթորիկը մղեղի պէս կը քշէ զինքը, կը մեկուսանայ: Ի՛նչ ընէ որ ազատի: Եթէ այդ կեանքն է որ այդքան դառնութիւն կուտայ իրեն, չկրնար փշրել հողէ ամանը, անձանթ յաւիտենականութեան մը դիրկը նետուելու: Այլ չկրնար հաշուել, միայն կ'ուզէ փախչիլ եւ ազատ ըլլալ, գէթ փոխել իր գոյութիւնը: Գերեզմանին հետ դաշինք ըրած էր, հիմա կը կանչէ իր բարեկամը՝ մասնը: «Ինքզինքը խեղդեց», հաւանաբար իր գործածած չուանը խզուելով «զըլ-խիվար կ'իյնայ մէջտեղէն ճեղքուելով»:

Յուդա ինկաւ իր տեղը երթալու...

••

Հիմա անով ուղղով կենանք այդ վիհին առջեւ սիրելի ընթերցող: Սիրտդ լոկցուր, նայէ մեղքին ահաւորութեան եւ Աստուծոյ անխափանելի արդարութեան վրայ, եւ մեծ վառնդի մը ուղբերգութեան մը առջեւ հարցուր դուն քեզի: Ա.— Յիսուսի հետեւո՞րդ եմ ես: Թրիստոնեայ կը սեպուիմ, մարդիկ ալ զիս Անորը կը սեպեն,

սակայն յիշաւի իմ սիրտս կապուած է Յիսուսի: Ինծի համար ալ վտանգ մը չկա՞յ հետեւելու Յիսուսի, կարդալու, լսելու Անոր վրայ, թերեւս աղօթելու եւ ծառայելու Իրեն, առանց ներքնապէս, ճշմարտապէս Իրը ըլլալու: Հայրը զիս քաշած, սորվեցուցած եւ Յիսուսի տուած է:

Բ.— Յիսուսի հաւատարի՞մ եմ ես: Ես որ իր աշակերտն եմ եւ իր զաւակը վերստին ծնունդով, զԱյն մատնելու փորձութիւնը չունի՞մ երբեմն:

Իմ նուիրմանս մէջ վերապահում մը չկա՞յ որ մասնէ Իր կատարեալ Սէրը:

Իմ վկայութեանս մէջ շուք մը չկա՞յ որ մասնէ Իր պայծառ Լոյսը:

Իմ սրբութեանս մէջ տկարութիւններ չկա՞ն որ անարգեն Իր Մահը:

Իմ խոնարհութեանս մէջ հպարտութիւն չկա՞յ որ անպատեհ Իր խաչը:

Իմ բարեբրուս մէջ արծաթախրութիւն չկա՞յ որ մոռնայ Անոր ղեկարարութիւնը:

Ամէնքս ընենք այս հարցումները: Բոպէ մը խորհինք միայն մեր վրայ: Յուդան կործանող ուժերը մեր ճամբուն վրայ ալ դարանի կեցած են: Մի՛ վախնար լսելու Փրկչին յանդիմանող ազդարարութիւնը կամ ուղղող սիրալիր կոչերը: Եւ հիմա այդ կործանարար վիհէն երեսդ անդին դարձուր: Յիսուսի նայէ՛: Նայէ՛ խաչին: Լման եւ գիտակից սրտով մը, ըլլալ ապաշխարութեան համար, ըլլալ ուխտիդ վերանորոգման համար. քու հողիդ վստահէ Բարի Հովիւին, որուն ձեռքէն մէկը չկրնար յափշտակել քեզ:

Աստուծոյ վախը մտքիդ մէջ,

Յիսուսի սէրը սրտիդ մէջ,

Սուրբ Հոգւոյն լոյսը ճամբուդ վրայ,

Յառաջ գնա՛ Գառնուկին հտեւէն, ուր որ Ան կ'երթայ:

Զ. Բ. Պ.





ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՅՈՒՆԻՍ 7.—

ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՄԷՋ

Դաս Ղուկ. ԻԲ. 39-53

Կարդալ Եսայ. ԾԳ. 1-6

Գեթսեմանի կը նշանակէ «Ձէթի հնձան»։ Դրեթէ կառկած չկայ թէ Ձիթենեաց լեռան ստորոտն էր ան, եւ անոր մէջ ձիթապտուղ ճզմելու հնձան մը կար։ Որքա՛ն նշանակալից է այն իրողութիւնը թէ Յիսուս հող «ճզմուեցաւ» հողեկան ահարկու ճզմումով մը։ Աւետարաններուն մէջ հետեւեալ արտայայտութիւնները կը զըտնենք մեր Տէրոջ Գեթսեմանի մէջ արիւն քրտնեցնող հոգեվարքի աղօթքի ժառերը նկարագրող։—

Հոն Անիկա «սկսաւ տրտմիլ ու վշտանալ» (Մատթ. ԻԶ. 37)։

Հոն Անիկա «սկսաւ խռովիլ ու վշտանալ» (Մարկ. ԺԴ. 33)։

Հոն Անիկա ըսաւ, «Իմ անձս մեռնելու չափ տրտում է» (Մարկ. ԺԴ. 34)։

Հոն Անիկա «սաստիկ նեղութեան (հոգեվարքի) մէջ էր» (Ղուկ. ԻԲ. 43)։

Հոն Իր «քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր» (Ղուկ. ԻԲ. 44)։

Եւ ի՛նչ էր «այն գաւաթը» որուն համար մեր սիրեցեալ Տէրը կրկնակի անգամներ Իր Հօրը պաղատեցաւ որ եթէ կարելի էր, ան Իրմէ անցնէր։ Այս հարցումին պատասխանը կարելի է փնտռել հետեւեալ 2 համարներուն մէջ։—

Սաղ. ՀԵ. 8, «Տէրոջը ձեռքը բաժակ կայ ու զինին կարմիր է. անիկա խառնուածքով լեցուն է, ու անկէ կը թափէ, եւ իրաւ երկրի բոլոր ամբարիշտները անոր ձրուրները քամելով պիտի խմեն»։

Յայտ. ԺԴ. 10, «Անիկա Աստուծոյ սրտմտութեան պինիէն պիտի խմէ, որ անխառն լեցուն է Անոր բարկութեանը գաւաթին մէջ, եւ կրակով ու ծծումբով պիտի տանջուի սուրբ հրեշտակներուն առջեւ ու Գառնուկին առջեւ»։

Աստուծոյ սրտմտութեանը ու բարկութեանը գաւաթն էր, դժոխքի մաղձը, որ պիտի խմէր Յիսուս խաչափայտին վրայ։ Յիսուս աղօթեց

«սաստիկ զոչումով ու արցունքով որ՝ «այն ժամը Իրմէ անցնի» (Մարկ. ԺԴ. 33), այսինքն թէ այդ գաւաթը հող, Գեթսեմանիի պարտէզին մէջ չը խմցուէր Իրեն։ Այնպէս կ'երեւի թէ Սատանան կ'ուզէր Յիսուսը հող Գեթսեմանիի մէջ սպաննել, որպէսզի նա Իր արիւնը խաչին վրայ թաթելով չմեռնէր։

«Բայց ոչ թէ իմ կամքս, հապա քուկդ թող ըլլայ» (Ղուկ. ԻԲ. 42)։ Եբրայեցւոց թղթոյն մէջ կը կարդանք, «Որ կամքով մենք ալ սրբուեցանք Յիսուս Գրիստոսի մարմինին մէկ անգամ սլտտարագուելովը» (Եբր. Ժ. 10)։

ՅՈՒՆԻՍ 14.—

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ... ԽԱՉԸ ԵՂԱԾ

Դաս Ղուկ. ԻԴ. 33-46

Քրիստոսի խաչը այն տեղն է ուր աշխարհի մէջ գործող 2 մեծ ուժերը իրարու հանդիպեցան. Աստուծոյ սէրը եւ մարդուն մեղքը։ Մարդուն մեղքը եւ թշուառութիւնը ամէն ժամանակ Աստուծոյ սիրոյն եւ ողորմութեան հանդիպած էր, «Ուր աւելի եղաւ մեղքը, ալ աւելի եղաւ շնորհքը» (Հով. Ե. 20)։ Խաչին վրայ մարդուն մեղքը իր զագաթնակէտին հասաւ, նաեւ իր ամենէն բաց եւ կոշտ արտայայտութեան։ Յարգ մեղքը յայտնուած էր անհնազանդութեամբ, կռապաշտութեամբ, գողութեամբ, շնութեամբ կամ մարդասպանութեամբ, բայց հոս նա կը յայտնուի «Աստուածասպանութեան» ջանքերով։ Մեղքը հոս ճիգ մը կ'ընէ զԱստուած զահրկէց ընելու, զԱյն ստնակոխ ընելու եւ զԱյն ոչնչացնելու։ Ասկէց աւելին անկարելի էր։

Բայց խաչին մէջ մենք կը տեսնենք նաեւ զԱստուած Իր սիրոյ զագաթնակէտին վրայ (եթէ կարելի ըլլայ մարդկօրէն այսպէս արտայայտուիլ)։ Հոս կայ յայտնութիւնը Աստուծոյ սիրոյն, համբերութեան, երկայնամտութեան, ողորմութեան եւ շնորհքին՝ հանդէպ մեղսալից աշխարհը։ Քրիստոս Ինքզինքը կը զոհէ իր փոխանորդական զոհ՝ նոյն այն թշնամի մեղաւորներուն համար՝ որոնք Իր մահը ծրագրած են եւ զայն ի գործ կը դնեն ամենէն կատաղի եւ ամօթալի միջոցներով։ Երեւակալութիւնը սիրոյ կամ շնորհքի ասկէ աւելի բարձր պատկեր մը կրնա՞յ երեւակայել։

Մեր դասին մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ զղջացող աւազակին պատմութիւնը։ Այս քանի մը համարները աւելի ուշադրութեամբ ու մանաւանդ աղօթալի եւ հոգեւոր խորհրդով

կարգալով կրնանք տեսնել թէ արն մարդը աշխարհի վրայ ցարդ ապրած ամենէն մեծ մարդոցմէ մին կարելի է կոչել: Հաւատքի փիլիսոփայութեան ամենէն բարձր աստիճանը կը պարունակուի անոր խօսքերուն մէջ: Հոս կայ նաեւ առողջ Աստուածաբանութիւն մը:

Ձլջացող աւագակին աստուածաբանութիւնը—

1. Նա կը հաւատար թէ յաւիտենական բաները աւելի արժէք ունին քան ժամանակաւոր բաները: «Դուն Աստուծոյ չեմ վախնար:

2. Նա իր մեղաւոր ըլլալուն համոզուած էր հմր. 41:

3. Նա կը հաւատար ապաշխարութեան անհրաժեշտութեան, բաղդ. Մատթ. ԻԷ. 44: Մարկ. ԺԵ. 32 — Ղուկ. ԻԿ. 40-42ի հետ:

4. Նա կը հաւատար չարերուն արժանաւոր հատուցման (մեղքին վարձքը) հ. 41:

5. Նա կը հաւատար թէ ինք անկարող էր ինքզինք փրկելու հ. 42:

6. Նա կը հաւատար թէ իր փրկութիւնը բոլորովին ու միմիայն շնորհք պիտի ըլլար հ. 42, Եփես. Բ. 8, 9:

7. Նա կը հաւատար թէ Քրիստոս առանց մեղքի էր հ. 41:

8. Նա կը հաւատար Քրիստոսի Աստուածութեան հ. 40 և 42:

9. Նա կը հաւատար Քրիստոսի փրկող զօրութեան եւ փափաքին հ. 42:

10. Նա կը հաւատար Քրիստոսի փոխանորդական զոհին — «Նոյն դատապարտութեան մէջ ... գէշ բան մը չըբաւ»: Քրիստոս Բարաբբայի համար պատրաստուած խաչին վրայ գամուեցաւ:

11. Նա կը հաւատար յարութեան հ. 42:

12. Նա կը հաւատար Քրիստոսի ապագայ թագաւորութեան հ. 42:

ՅՈՒՆԻՍ 24.—

ՅԻՍՈՒՍԸ ՓԱՌՔՈՎ ՈՒ ՊԱՏՈՒՈՎ ՊՍԱԿՈՒԱԾ ԿԸ ՏԵՍՆԵՆՔ

Դաս Ղուկ. ԻԴ. 36-53

Կարդալ Երբ. Բ. 9

Հմր. 36, եւ քանի որ այս բաները կը խօսէին: Այս ժողովը Երուսաղէմի ամենէն փառաւորներէն մին եղաւ: Առաքեալները հաւաքուած են և յանկարծ գիշերանց էմմաուսի երկու աշակերտները ներս եկած էին եւ քանի որ անոնք այս բաները կը խօսէին...

Յիսուս ինք կայնեցաւ անոնց մէջտեղը—

Իր փառաւորուած մարմնով (տես նաեւ Ա. Յովհ. Գ. 2):

Խաղաղութիւն ձեզի...

Բայց անոնք զարհուրելով կը վախճային—

Վախնալու շատ պատճառներ ունէին թերեւ, բայց հող կեցած էր «Խաղաղութեան Իշխանը» մահաւանդ մահուան եւ վախին յաղթելէ յետոյ (տես Յովհ. ԺԶ. 33 եւ Երբ. Բ. 14, 15):

Հ. 39, Ես ինքնա եմ:

Ես եմ, Ես եմ,

Մի վախնար, զողացող հոգի, Ես եմ:

Փոթորիկին մէջ սաստիկ

Երբ զոռան ջուրք,

Մի վախնար, զողացող հոգի, Ես եմ:

Տեսէք ձեռքերս ու ոտքերս—

Աշակերտները Յիսուսը միայն իր ծայնով ճանչնալու հաւատքը չունեցան: Նա ըսաւ, տեսէք. ու երբ աչքերով տեսնելով ալ չհաւատացին, Յիսուս ըսաւ, շօշափեցէք զիս. Յիսուս յետոյ կոչըբաւ անոնց իր վէրքերուն ծակերը քննելով, ու իբր վերջի փաստը իր յարութիւն առած ըլլալուն, Յիսուս «կերաւ անոնց առջեւ»

Հ. 44, «Ինձի համար գրուած են»—

Յիսուս զրախտէն Աբրահամէն կամ Մովսէսէն լուր մը չըբերաւ, ոչ ալ հարուստէն կամ Ղազարոսէն, հապա իր աշակերտները առաջնորդեց մարգարէութեանց վկայութիւններուն իր մասին (տես Ղուկ. ԺԶ. 30, 31, Յովհ. Ե. 46, 47):

Հ. 45, Անոնց միտքերը բացաւ որպէսզի գիրքերը հասկնան—

Ոչ թէ գիրքերը անհաւկնալի են, հապա մեր միտքերը ապականած եւ ազօտացած են:

Իբր զանոնք կ'օրհնէր, զատուեցաւ անոնցմէ ու վեր կ'ելլէր երկինք—

Ձեռքերը, ծակած ձեռքերը տարածած, բարի Հովիւը օրհնելով զատուեցաւ: Շնորհքով եւ ոգորմութիւնով Նա, մեծ Հովիւը, կ'օրհնէ մեզ հիմա երկինքէն: Զօրութիւնով ու մեծ փառքով Նա, Հովուապետը, պիտի գայ իր հաւատարիմ հետեւողներուն համար:

ԵՌԱՄՍԵԱՅ ՔԱՂՈՒԱԾՔ

ՅՈՒՆԻՍ 28.—

ՅԻՍՈՒՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԵՏՔԵՐՈՒՆ ԸՆԴԱՆՈՒՋ Կ'ԵՐԹԱՅ

Դաս Գ. Առաք. Ա. 1-11

1 Յիսուս մեղաւորաց բարեկամը Ղուկ. Է. 36-50, «...Ներուած են ասոր շատ մեղքերը, վասնզի շատ սիրեց...»: «Անոր անունը Յիսուս զնես, քան»

զի Անիկա Իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ» (Մատթ. Ա. 24): Յիսուսի առջեւ մեղաւորին պատուոյ նշաններն են կարծես՝ մեղաւորին մեղքերը. «Իւր աւելի եղաւ մեղքը, ալ աւելի եղաւ շնորհքը» (Հոով. Ե. 20): Ո՛ւր են այսօր «շատ մեղքեր խոստովանողները», առանց ասոր «Յիսուսը շատ էր սիրեմ» ըսող շատեր (ինչպէս ուրիշ շատ մը բաներու մէջ) հոգ ալ լեզուի չափազանցախօսութիւն կ'ընեն:

2. Յիսուս եւ վշտացեալները Մատթ. Թ. 27-31: Յիսուսի «Ողորմէ մեզի» կանչող վշտացեալները եւ հիւանդները այսօր ալ շատ են. բայց եթէ Յիսուս դառնար ու անոնց հարցնէր, «Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել», եւ եթէ այս հարցումը նա մեր սրտին խորքերը ուղղէր՝ քանինե՞րս արդեօք պիտի պաշտանձէինք անհաւատութեամբ: Մեր օրերու եկեղեցին (ճշմարիտ) որքա՞ն կորսնցուցած է մարմնի բժշկութեան հաւատքը: Շատ մը հաւատացեալ հիւանդներ բժշկութիւն խնդրելու ատեն «Եթէ Քու կամքդ է» խօսքին ետեւ կը պահեն բժշկութեան հանդէպ անհաւատ սիրտ մը: Ուստի սիրելի մարմնով հիւանդ հաւատացեալ՝ միաձայն դռնէն, «Կը հաւատամ Տէր, օգնէ իմ անհաւատութեանս»:

3. Յիսուս մխիթարիչ Մատթ. ԺԱ. 25-30: Աշխարհս շատ վարդապետներ ունեցած է, շատ կրօններու հեղինակներ տեսած է, շատ քարոզիչներ լսած է, որոնք այլեւայլ վարդապետութիւններով ու վարկածներով ջանացած են մարդկութիւնը օրօրել, հանդարտեցնել, սրտի խաղաղութիւն եւ մխիթարութիւն հասցնել, բայց յաջողած չեն: Մէկը կայ, եւ միայն այդ մէկն է որ կրնայ մխիթարութիւն տալ իր մեղքերուն եւ իր անօրէնութեանց բեռան տակ տառապող հոգիին, յոգնած եւ բեռնաւորութեանը, այդ մէկը Յիսուսն է: Ասոր պատճառը Իր աստուածային Անձն է, ու ինք Իր անձին մէջ է որ կ'երաշխաւորէ այս մխիթարութիւնը եւ ամէն ցեղէ ու լեզուէ ու գոյնէ կրցած են այդ մխիթարութիւնը ունենալ: Եթէ դուն չունիս, հոգի, զնա գուն ալ Անոր եւ Անկէ մխիթարութիւն պիտի գտնես: Անոր բազուկները բաց են քեզի համար:

Հետեւողութեամբ

Վ. Ս.



ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷջ

○○○○○

ԷՐԿԱՆ ԲԱԺԻՆԸ.—

Աստուածաշունչը շատ յստակ կերպով կ'որոշէ իր պարտականութիւնները, Եփես. Ե. 25-33 Կող. Գ. 19, Ա. Պետ. Գ. 7: Երեք հատուածներ, որոնք մարդիկ, այրերը պէտք է զիտնան, վասնզի անոնք կը ցուցնեն իրենց պարտականութիւնները: Ահա մենք երեք անգամով դրուած ենք սիրելու պարտականութեան զիմաց: Աստուծոյ խօսքին այս պատուէրը շատ կարճ է, «Այրեր, սիրեցէ՛ք ձեր կիները», բայց որքա՞ն մեծ եւ լայն ու խորունկ է ան իր նշանակութեամբ եւ բազմաթիւ կիրառութեամբ:

Այս է որ կիներ իր ամուսինէն կը սպասէ եւ այս է որ Աստուած կը պահանջէ:

Կը սիրենք տեսնել երիտասարդ զոյգ մը որ իրարու կը միանան ամբողջ կեանքին համար: Միշտ յուզմամբ է որ զանոնք կը զիտեմ եւ կը խորհիմ դեռատի կնոջ քաջութեան եւ հաւատքին վրայ: Նա կը թողու իր հայրը, մայրը, տունը որուն մէջ անցած են իր մանկութիւնը ու երիտասարդութիւնը եւ կ'երթայ դնելու իր կեանքը անոր ձեռքերուն մէջ՝ զոր կը սիրէ, բայց որ տակաւին շատ քիչ կը ճանչնայ... Նա կ'երթայ ինքզինք անոր տալու, նա իր ամբողջ էութիւնը, անոր կը բերէ, իր ամբողջ ապագան: Նա վրտապանութիւն ունի, ինչո՞ւ... Նա կը հաւատայ թէ ան զինք կը սիրէ:

Հանդիսաւոր բան մըն է մարդու մը համար այսպիսի վստահութեան մը պատասխանատուութիւնը ստանձնել, իր ձեռացը մէջ առնել այսքան փափուկ բայց իրեն վստահուած կեանք մը, ու խոստանալ զայն պահել, զայն սիրել, պաշտպանել մինչեւ որ մահը միջամտէ: Ափսո՛ս, որքան մարդիկ իրենց պարտականութեան մէջ թերացած են, որքաններ բնաւ իրականացուցած չեն անոր մեծութիւնը: Իւրաքանչիւր մարդ պէտք է հասկնայ թէ երբ կին մը (իր ընտրած կինը) իր ձեռքերը կը դնէ իրենցիկուն մէջ իր կիները ըլլալու համար, նա կ'առնէ իր կեանքը իր բոլոր յոյսերովը եւ վախերովը, ուրախութեան կամ տրտմութեան բոլոր կարելիութիւններովը, իր բոլոր շահախնդրութիւններով եւ կը դնէ իր ձեռքերուն մէջ: Մարդը զայս ընդունելով ինքզինք կը դնէ ամենէն հանդիսաւոր պարտականութեան

տակ, ընելու ինչ որ իրեն կարելի է այդ կեանքը երջանկացնելու, գեղեցկացնելու եւ ազնուացնելու: Ասիկա մանաւանդ իր պարտականութիւնն է թէ ան քրիստոնեայ է: Եղբայր, եթէ մինչեւ հիմա այս տեսութիւնը չես ունեցած, Տէրը այսօր զայն քեզի տայ, նոյնիսկ եթէ մագերդ սպիտակախառն եւ արդէն: Այս պարտաւորութիւնը կարելի չէ իրականացնել, եթէ ոչ Յիւս. Բիտ սիրով մը, որուն տեսակը եւ չափը Ս. Գրքով մեզի տրուած են, «Սիրեցէք... ինչպէս Քրիստոս... ու իր անձը մատնեց...» (Եփես. Ե. 25):

Սիրել, ինչպէ՛ս մեր հոգիներուն եւ մեր երջանկութեան թշնամին այլափոխած է բառը եւ բանը: Սիրել, անձնասիրաբար զուարճանալ է կ'ըսուի անոր թագաւորութեան մէջ: Սիրել, ինքզինք տալ, զոհել է կ'ըսուի Աստուծոյ թագաւորութեան մէջ: Իրարու բացարձակապէս հակառակ երկու զաղափարներ: Աստուած կ'ուզէ որ մենք սիրենք:

Եթէ կը սիրենք, նախ պիտի փնտռենք սիրիւի ըլլալ:

Ամենէն առաջ՝ տանը մէջ այնքան մը «իրով պիտի վարուինք, ինչպէս կ'ընենք տունէն դուրս, ընկերական շրջանակի մէջ: Կին մը իր էրկան մասին կ'ըսէր, «Տանը մէջ սատանայ մըն է եւ դուրսը հրեշտակ մը»: Ի՛նչ տխուր բան, բայց որքան յաճախ այսպէս է: Կան մարդիկ որ պիտի չուզէին մըջիւն մը կոխկաշտել, ճանճ մը սպաննել, որ պիտի ըմբոստանային տեսնելով յոգնած անասունի մը ծեծուիլը, կամ վիրաւորուիլը, որ սակայն թերեւս ամէն օր իրենց հաւատարիմ կեանքի ընկերոջ սիրտը կը վիրաւորեն խիստ խօսքերով, անտեղի դառն պարսաւանքներով, անհամբերութեան ակնարկներով, վիրաւորող նայուածքներով: Որովհետեւ այդ կինը ձեր կիներն է, ինքզինքնուր կը թուլատրէք անոր հանդէպ անարգանքով վիրաբերիլ, բառեր մը գործածել, ձայնի աշնակոխ շեշտ մը, անանկ դերք մը որ բնաւ ուրիշ կնոջ մը հանդէպ պիտի չվարուէիք: Եթէ քրիստոնեայ ես, այսպէս ընել քեզի արգիւտած է: Պէտք է մեր քրիստոնեայ տուններէն վանենք բրտութիւնը: Բնաւ պէտք չէ դառնանանք: 25^{րդ} որ այս պատուէրն է որ մեզի կուտայ Կող. Գ. 19, «Այրեր, սիրեցէք ձեր կիները ու դառն մի ըլլաք անոնց»: Ուրեմն ինչպէ՛ս. հսկելով մեր խորհուրդներուն, բնաւորութեան վրայ, որ կրնայ տխուր արտայայտութիւններ ունենալ վարժունքով, խօսքով, գործով: Եւ հոս դատապարտուած դառնութիւնը կրնայ ծածկուիլ առանց խօսքի ի յայտ եկող եւ նեղող լռութեան մը «քէն» ին

մէջ: Ասիկա խստութեամբ վարուէին աւելի քիչ վտանգաւոր է, բայց արդեօք Աստուծոյ առջեւ աւելի պակաս յանցանք է: Անտարակոյս ո՛չ: Անմիջապէս վանենք ամէն դառնութեան խորհուրդները զաղափարի, զնահատութեան, զզացումի անհամաձայնութիւններ երեւան դան, շուտ մը կարգադրենք:

Վեր. Օպրին մէթոտ մը կը գործածէր որ ընդհանրապէս ազդեցիկ կ'ըլլար ամուսիններուն օգնելու իրենց անհամաձայնութիւնները կարգադրելու: Զանոնք երկուքն ալ իր աշխատանքը կը տանէր եւ կը նստեցնէր մէկը սենեակին մէկ անկիւնը, միւսն ալ դիմացի անկիւնը: Անոնց մէջ տեղ կը դնէր երկու երես ունեցող սեղան մը, մէկ կողմին վրայ թոչուն մը գծուած, միւսինը ծաղիկ մը:

— Ի՛նչ գծուած է պատկերին վրայ, կը հարցնէր էրկան:

— Թոչուն մը, կը պատասխանէր ան:

Յետոյ կնոջը դառնալով նոյն հարցումը կ'ընէր:

— Ծաղիկ մըն է, կը պատասխանէր նա, ամուսինս կը սխալի:

— Ո՛չ, կ'ըսէր այրը, թոչուն մըն է...

Այն ատեն Օպրին տեղերնին փոխել կուտար եւ իրենց անհասկցողութիւնը կը լուսաբանուէր:

Ջանք մը ընենք գիրար հասկնալու համար. ասիկա մեր կարծածին չափ դժուար չէ: Բարի ըլլանք եւ գիրար սիրենք քանի որ մէկտեղ ենք: Կեանքը արդէն շատ կարճ է:

Իր կեանքի ընկերոջ դազադին կամ գերեզմանին վրայ ծաղկեպսակներ դնելէն աւելի անվերջալ կայ. գիտնալ ամէն օրուայ կեանքին մէջ՝ գորովանքի, փոխադարձ նկատումի, սիրալի եւ երախտագիտական խօսքերու, բարութեան ծաղիկներ դնել:

Պետրոս առաքեալ կ'ըսէ, «...պատիւ տալով կիներուն» (Ա. Պետ. Գ. 7):

Մարդ ընդհանրապէս իր կնոջ պատիւ կուտայ իր կինը ըլլալէ առաջ. անկէ հաջ շատ յաջ՝ ճախ իր զիրքը կը փոխուի: Կարծես թէ ոմանց համար դրուած ըլլար, «Անարգեցէք զանոնք, մանկներու կարգին սեպեցէք, կին ըլլալէն աւելի բան մը չեն. երբեք մտիկ մի ընէք անոնց տուած խորհուրդին...»: Տիտ'ըր զրուցուածք: Պատուեցէք զանոնք, պատիւ ըրէք անոնց ամէն բան: Իրենց հետ բաժնելու: Նկատեցէք զանոնք «ձեր յարմար օգնականը»: Այս է որ Աստուած ուզեց ձեզի տալ. ձեզի կին մը տալով: Կինը աւելի տկար էակ մըն է, ինչպէս կ'ըսէ Պետրոս առաքեալը, որ ըսել չէ ստորնագոյն:

ՊԱՏԱՆԵԱՑ



ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶԲԸ

Շուշանիկ իր ծնողաց մէկ հատիկ աղջիկն էր: Իր ընկերներէն եւ դասատուներէն շատ սիրուած էր ան իր քաղցր բնավորութեանը համար: Դըպ-րոցը իր դասերուն մէջ միշտ առաջիններէն էր, բայց ան իր ունեցած այս յատկութիւններով երբեք չէր հպարտանար, ընդհակառակը իր ուշի-մութիւններն ու կարողութիւնները ի սպաս կը դնէր իր դասընկերներուն եւ խաղընկերներուն:

Կիրակնօրեայ դպրոցը կանոնաւորապէս կը յաճախէր, հոն իր ներկայութիւնը մեծ ուրա-խութիւն կը պատճառէր ուսուցչուհիին, վասնզի շատ անգամ իր ընկերները խուժրով իր հետ կը բերէր: Չէր քաշուեր իր գիտցածը անոնց ալ ը-սելու երբ սորվելու փափաք յայտնէին, եւ ինքն էր որ ուսուցչուհիին բոլոր հարցումներուն զրե-թէ անսխալ կը պատասխանէր, որովհետեւ ու-շադրութեամբ մտիկ կ'ընէր դասին սկիզբէն մին-չեւ վերջը եւ տունն ալ սովորութիւն ըրած էր իր Ս. Դիրքը ամէն օր սերտելու. իր չհասկցած բաները ծնողքին կը հարցնէր եւ կամ թուղթի

Սիրեցէք — Դառն մի ըլլաք — Պատիւ տուէք: Ահա քրիստոնեայ ամուսնոյն պարտականութիւ-նը: Կարելի՞ է ասիկա իրականացնել: Կ'զգանք թէ մեր բնական սէրերը ասոր անբաւական են, մեր անձնական սրտերէն տարբեր ակի մը պէտք ունինք: Մեր անձնասէր բնավորութիւնը միշտ յաղթանակները կ'ուզէ ունենալ: Ան հակամէտ է անհաւասարակշռութեան: Պէտք է յարաբերու-թիւն մշակել Աստուծոյ հետ որ սէրը ստեղծած է եւ որ Սէր է: Պէտք է որ շնորհքը մեր մէջ յաղթութիւն տանի. պէտք է որ ան մեզ խոնար-հեցնէ, միշտակ խոնարհ եղողն է որ կրնայ ճշմար-տապէս սիրել: Պէտք է որ մեր «ես»ը խաչուի, Տէրը օգնէ մեզի:

(Նար.)

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

վրայ կը նշանակէր եւ կիրակի օր ուսուցչուհիին բացատրութեանը կը դիմէր: Ով որ Շուշանիկը կը ճանչնար, զայն իր զաւակներուն օրինակ կը ցուցնէր եւ կը պատուիրէր որ անոր հետ ընկեր ըլլային:

Սակայն պիտի գարմանաք երբ ըսեմ թէ Շու-շանիկ գաղտնի մեղք մը ունէր, որուն մասին եր-բեք մտածած չէր եւ զոր միայն Աստուած եւ իր ծնողքը գիտէին: Այդ մեղքը որկրամոլութիւնն էր: Սատանան, որ ամենէն աւելի Շուշանիկի նման իրմէ հեռու եղող անձերը կը հետապնդէ, իր ճարպիկութեամբը յաջողած էր այս աղջկան մէջ այդ պղտիկ մեղքին բոյն մը պատրաստել: Բայց գիտէ՞ք որ մեղք մը, որքան ալ փոքր ըլ-լայ ան, երբեք առանձին չի մնար, իրեն հետ ա-ւելի մեծելու ալ կը բերէ հետզհետէ: Սատանային կերպը միշտ այսպէս եղած է մարդիկը Աստուծ-մէ հեռացնելու իր գործին մէջ. նախ շա՛տ ան-նշան, բնաւ աչքի չգարնող յանցանքով մը կը սկսի, եւ վա՛յ անոր որ տեղի կուտայ:

Ուրեմն Շուշանիկ որկրամոլ էր. կարկանդակ եւ անուշեղէն քիչ մը չափէն աւելի կը սիրէր եւ կ'ուտէր, եւ որովհետեւ միշտ եւ չափազանց չէր կրնար ունենալ — քանզի ծնողքը իր առողջու-թեան համար գիտէին թէ ի՞նչ եւ որքան տալու էին իրեն — ինքն ալ երբեմն գաղտնի ձեռք կը ձգէր զանոնք: Երբ միշտակ ըլլար, կը բանար պա-հարանը, կարկանդակին կամ շաքարեղէնին տու-փը եւ կ'ուտէր: Պարզ էր որ զողութիւն էր ըրածը: Բայց Սատանան այնպէս մը անոր աչքը բռնած էր որ իր ըրածը չզգայ. չէ՞ որ եթէ զգայ կը դառնայ իր ճամբայէն: Ըսի թէ իր ծնողքը գի-տէին որ Շուշանիկ այս մեղքը կը գործէ, սա-կայն անիկա այնքան հնազանդ եւ բարի էր որ չէին կրնար ուղղակի իրեն գիտցնել իր յան-ցանքը. զայն վերաւորելէ կ'զգուշանային:


Վերջապէս աղջկան մեծ հայրը զգաց որ ի-րենց խորհածը սխալ էր. պէտք էր կերպով մը ազատել զայն քանի դեռ ուշ չէր, որովհետեւ ե-թէ այդպէս շարունակէր, մեղքը արմատ կը կա-պէր իր մէջ: Ուստի որոշեց հնարք մը գործադ-րել:

Իրիկունը երբ Շուշանիկ դպրոցէն եկաւ, իր սովորութեան համաձայն մտաւ ուղղակի խոհա-նոց:

— Բարի իրիկուն, մեծ մայրիկ, գոչեց, համ-բոյր մը տալով անոր: Յետոյ նայեցաւ շուրջը: Առաջին բանը որ նշմարեց, գեղեցիկ շաքարե-ղէնի տուփ մըն էր սեղանին վրայ դրուած: Ան-պայման նոր դնուած էր եւ լեցուն: Սաստիկ փա-

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ԱՆՈՐ



Անոր որ զիս սի-րեց ան-չափ
Անոր որ զիս սի-րեց ան-չափ
Անոր որ զիս սի-րեց ան-չափ
Պիտի հնազանդիմ:

Անոր որ ինձ համար մեռաւ
Անոր որ ինձ համար մեռաւ
Անոր որ ինձ համար մեռաւ
Պիտի միշտ հետեւիմ:

Անոր որ յաղթական յարեաւ
Անոր որ յաղթական յարեաւ
Անոր որ յաղթական յարեաւ
Միշտ փառք մատուցանեմ:

Փառք մը զգաց տուփը բանալու եւ մէջինը ճաշակելու: Բայց մեծ մայրը հոն էր: Քիչ ետք այս վերջինը դուրս ելաւ: Շուշանիկ անմիջապէս առաւ տուփը եւ անկիւն մը քաշուելով բացաւ անհամբեր: Յուզումէն սոսկաց: Տուփին մէջ ճերմակ թուղթ մը կար, որուն վրայ խոշոր աչք մը նկարուած էր: Աչքը շեշտակի իրեն կը նայէր: Անոր վերելը եւ տակը գրուած էր, «ԳՈ՛ՐՆ» ո՛վ Աստուած, զիս կը տեսնես»: Շուշանիկ սկսաւ դողալ: Անմիջապէս դարձուց թուղթը որ չտեսնէ այդ սարսափելի ակնարկը: Եւ ահա թուղթին ետեւն ալ գրուած էր, «Գողութիւն մի ընել»:

Ակնթարթի մը մէջ իր կեանքը աչքին առջեւ եկաւ: Հիմա միայն զգաց որ երկար ատենէ ի վեր գողութիւն է որ կ'ընէր ինքը, եւ թէ Աստուած այդ բոլորը տեսած էր: Թուղթը ձեռքը հեկեկալով վազեց մեծ մօրը քով ու խոստովանեցաւ ամէն բան: Յետոյ երկուքն ալ ծունկի եկան եւ Աստուծոյ ներում խնդրեցին: Շուշանիկ ուխտեց որ երամուտութեան եւ գողութեան մեղքերը մէկ-դի նետել իրմէ, եւ իր ուխտը մինչեւ վերջը պահեց:

Ուր որ երթաս, ինչ ուր ընես, սիրելի փոքրիկ բարեկամս, միշտ մտքիդ մէջ ունեցիր թէ Աստուծոյ ակնարկը, Անոր ամենատես աչքը անթարթ քեզի կը հետեւի եւ զքեզ կը դիտէ: Անոր ամենատես աչքերէն մէկ մազ եւ մէկ շարժում չվրիպիր:

«ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀԷ». — Քոյր Հետփիկ Պիւլ թարգմանաբար երրորդ պատմութիւն մը կը հրատմեն հայ պատանիներուն:

Այս գրքոյկն ալ միւսներուն պէս զբաւիչ ըլլալու աստիճան հետաքրքրական, եւ սրբացուցիչ ըլլալու աստիճան շինարար է, այնպէս որ ծնողքներ իրենց զաւակներուն չափ պիտի օրհնուին եթէ աղօթքով ու մտառութեամբ կարդան:

Տեսրակին պարունակութիւնն է Աստուծոյ վստահող երկտասարդի մը ընդունած աղօթքի հրաշալի պատասխանները: Անակնկալ յանկարծականութեամբ իրարու յաջորդող դէպքերը գուցէ անհաւատալի թուին Աղօթքի զօրութեան վրա կասկածողներուն: Բայց մեղի հաւատացեալներու համար Աստուծոյ զաւակի մը այս փորձառութիւնները ոչ միայն ապշեցուցիչ չեն, այլ առաւելս քաջալերական մեր հաւատքն ու վստահութիւնը արծարծելու եւ մեր աղօթքի ու բարեգործութեան կեանքը բազմապատկելու համար:

Ծնողքներ ուրախութեամբ եւ երախտագիտութեամբ թող կարդան ու կարգաւ տան իրենց զաւակներուն: Օրհնութիւնը անխուժափելի է:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱՌԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղին վրայ):

ՄԱՐՍԻՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

8 30 կիր. դաս մեծերու 2 r. Philippe de Giraid
15 30ին աղօթածողով, » »

Կիր. ժամը 3 45ին քարոզածողով, »
Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ
Սէնժուլիէն եկեղեցոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրմ, Ս. Միքր, Ալթ, Պուլ-
վար Օտո մասնաւոր բնակարաններու մէջ.

Շարաժամիչի ժողովներ

Բ.շբ. ժամը 2ին Սէնժ Անժուան,

Դ.շբ. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ.շբ. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե.շբ. ժամը 20ին Սէն ժէրմ

Ռ.շբ. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon, St.Loup

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:
10. 30ին Ս. գրական ուսումնա

15 30 ին քարոզածողով:

Սէնժ ՄԱՐԿՐԻԺ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով:

ԼԱ ՍԻՐԺԱ.—Քարոզիչ՝ Պատ. Ս. Պագգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը
.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Վեր. Ա. Փափագեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն ՓԻԷՐ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆՔԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց
14ին քարոզ եւ աղօթածողով:
.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Վեր. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebate

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebate.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆՔԷԼԻԺԷՆ—Քարոզիչ Պատ Ի. Աբրահամեան
60 Rue Richelandière

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République
17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը
.....

ԲԱՐԻՋ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով
11 Rue Jean Bert Ա յարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Ը. քա-
նախօռնին: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Օ. Ք. Ը.

37 Rue Tournefort Paris 5 Metro Mouhe
Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ՝ Պր. Մ. Վէքիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով
Rue des Brochets, Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

ՆԱԸՐ ՄԵԼՆԵՂԱԼ.—

«Բանբեր»ի ընթերցողներէն շատեր անշուշտ պիտի հետաքրքրուին լսելով թէ Մայիս 9ին ճամբայ ելաւ «Մինասեա» անուն նաւը Մարսէյ-լէն, որ կը փոխադրէր 1800էն աւելի չափահաս եւ թերեւս անկէ քիչ պակաս թուով 16 տարեկանէն վար եղող անչափահաս հայեր զէպի Հայաստան: Գացողներուն եւ ողջերթ մաղթողներուն մէջ մեծ էր սգը: Երբ թիւնը: Գացողներուն մեծագոյն մասը միայն Մարսէյլէն էին:

Այս առթիւ մեր կողմէն կարելի եղաւ ճամբորդներուն ձեռքը տալ 300էն աւելի «Բանբեր» ինչպէս նաեւ 400ի մօտ Սողոմոններ եւ 400 Աւետարան ուսանայ լեզուով:

Մերժողներ եղան, նոյնիսկ ծերունիներ, որոնք կը խորհէին երթալ այնպիսի երկիր, մը որ ալ ազատ պիտի ըլլային նոյնիսկ զԱստուած ալ չը պաշտելու, բայց սիրով եւ ուրախութեամբ առնողները աւելի շատ էին: Աղօթեցինք որ Տէրը Իր խօսքը օգտակար ընէ ընդունողներուն եւ զանոնք արթնցնէ Աստուածահաճոյ հպատակներ ըլլալու հայրենիքին ու օգտակար քաղաքացիներ Հայաստանին: Ճշմարիտ օգտակար քաղաքացիներ աստուածապաշտ քաղաքացիներ է: Ուստի բոլորս աղօթենք գացողներուն ու անոնց մէջ ցրուած Աստուծոյ խօսքին համար:

«Բանբեր»ի օրացոյցը.—

Հայ ընտանիքի օրացոյցը 1937ի համար, արդէն պատրաստուելու վրայ է եւ Յուլիսի վախճանին կրնայ զրկուիլ բոլոր ուղողներուն: Ուստի անոնք որ մեծաքանակ կ'ապսպրեն եւ ժամանակին ունենալ կ'ուզեն, թող բարեհաճին կանխաւ մեզի իմացնել: Այս տարի ալ միայն անցեալ տարուան թուով պիտի հրատարակենք, այնպէս որ չենք կրնար երաշխաւորել որ վերջին վայրկեանին ապսպրողները գոհացում պիտի կրնան գտնել: Այս տարուան օրացոյցներէն շատեր ապսպրեցին քիչ մը ուշ, բայց չկրցան ընդունիլ, քանզի արդէն շատոնց սպառած էր: Ուս-

տի կանուխէն կը ծանուցանենք որպէսզի մեր բոլոր աշխատակիցներն ու ընթերցողները ժամանակին զրեւն մեզի որ մենք ալ իրենց համար ժամանակին հասցնենք: Աղօթած ենք եւ կ'աղօթենք որ այս պզտիկ աշխատութիւնն ալ Տէրոջը փառքին եւ հոգիներու փրկութեան ծառայէ:

Աղօթենք «Բանբեր»ի համար.—

Անցեալ տարի սիրելի ընթերցողի մը կողմէ ատաղարկուած էր որ «Բանբեր»ի ընտանիքը տարին երկու օր ունենայ, որուն մէջ մասնաւորապէս աղօթենք իրարու համար: Խմբագրութիւնս այս ատաղարկին կրկին ընթացք կուտայ եւ յարմար կը սեպէ որ տարուան առաջին Աղօթքի օրը ըլլայ Յունիսի վերջին կիրակին այսինքն 28:

Այդ օրը եթէ կարելի է տեղական եկեղեցիներով, կամ խումբերով եւ եթէ այդ ալ անկարելի է, անհատապէս աղօթենք խմբագրական մարմինին, բոլոր յօդուածագիրներուն, յօդուածներուն եւ ընթերցողներուն համար: Աղօթենք որ Տէրը Իր Սուրբ Հոգիին զօրութիւնովը զօտեւորէ բոլոր յօդուածագիրները, եւ ամէն ինչ որ կը գրուի՝ Անոր շունչովը գրուի եւ բոլոր ընթերցողներուն ներքին պէտքերուն յագորդող ատող յօդուածներ ըլլան:

Աղօթենք որ «Բանբեր»ը այս մութ ու խաւար ժամանակին մէջ Քրիստոսի լոյսը տանի իր գացած 22 երկիրներուն մէջ եւ խաւար սըրտեր լուսաւորուին անոր միջոցաւ:

Անոնք որ արտասահմանէն իրենց բաժնեգինը կը զրկեն մընի օրալրով, պիտի խնդրէինք որ հետեւալ կերպով գրեն, Rev. H. N. Ghazarossian, 7 Rue Papère, Marseille (France). c | c 182. 53 Marseille. Իսկ ուրիշներ որոնք ժամանակ չեն ուզեր կորսնցնել, ի մասնաւորի Ամերիկայէն, կրնան տօլար կամ դրօշմաթուղթեր ներփակել իրենց նամակին մէջ ու զրկել: